





ԶՄԻՍԾԻՆ





ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Օգոստոս

1973



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՆՈՐՀՔ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԱՆ—ԱՐՔԻԻԱՍԻ ճոր սահմանադրանքությունները	8
Հայտարարություններ	7
ՄԱՅՐ ԱԹՈՐՈՒՄ	8
ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻՋՅԱՆ—Ա. Սահակ Պարթևը և հայ եկեղեցական երգարվեստը	9
Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ—Ա. Բարսեղ Կեսարացու ճառերը	20
ԱՐԱՆՆ Ե. ՎԱՐԴԱՊԵՏ ԲԵՐԲԵՐՅԱՆ—Հայ անգլիկանները ԺԹ դարի 2-րդ կեսին	28
Օ. Ա. ԵԳԱՆՅԱՆ—Կոմս Ա. Ա. Ուվարովի «Էջմիածնի մատենադարանը» ղեկավարում	
հիշատակված ձեռագրերը	33
Գարեգին եպս. Հովսեփյանի հայերեն ձեռագրերի հավաքածուն	35
ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԱԴԱՄՅԱՆ—Իր վավերագիր Ալեքսանդրապոլի եկեղեցիների վասին	37
Թուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի ճոր ստացված ձեռագրերի	40
Լուրեր քույր եկեղեցիներից	42
Լուրեր եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնից	48
Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի	49

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
Redaction de la revue «Elchmiadzine», Elchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 3/VIII 1978 թ.: Ստորագրված է տպագրության 4/IX 1978 թ.:

Տպագրական 4 մամուլ, թուղթ 80×84¹/₂, պատվեր 557:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1978 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱԹՆ ՀԱՅՈՑ



ՇՆՈՐՀՔ ԱՐԲԵՊՈՒՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏՅԱՆ,

Պատրիարք (այսօր Թուրքիոյ)

Ա Ն Թ Ի Լ Ի Ա Ս Ի ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Տրված ըլլալով մեր ժողովուրդի ներկայ գրվածությունը աշխարհի գրեթե ամեն կողմերը, կրնանք ունենալ կամ ստեղծել կրոնական կամ եկեղեցական միացյալ դրություն մը. ոչ մէկ արտաքին արգելիչ պատճառ գոյություն ունի այս նպատակը իրագործելու մէջ: Եթե կան արգելիչ ազդակներ այս միացյալ դրությունը ստեղծելու ճամբուն վրա, անոնք բոլորովին ներքին են և անհարթելի չեն քարեքայտաքար: Այս ուղղությամբ վործեր եղած են 1920-ական թվականներէն ի վեր, առանց սակայն մնալու և հաստատուն արդյունքի:

Եթե շարունակենք զուրկ մնալ կրոնական ու եկեղեցական միացյալ քաղաքացւոյն կեդրոնական իշխանութենէն, անխուսափելիորեն պիտի շարունակվին այն բոլոր անկարգությունները և անպարտաւորությունները, որոնց ակամատես ու ակամջալուր կրլանք կես դարէն ի վեր:

Օրենքի և ընկերային կարգ-կանոնի ըմբռնումը արդարեւ մարդ արարածի հիմնա-

կան հատկանիշներն են մեկն է: Օրենքի և կարգ-կանոնի հնազանդությունը կգատորոշեն մարդը անասուններէն: Մարդը տմարդութենէն վեր քաղաքացնողը օրենքի և իշխանության հանդեպ ցույց տրված հարգանքը և հնազանդությունն է: Եթե այսօր համամարդկային ընկերության մեջ կարգ մը ազգեր և ժողովուրդներ համեմատաբար ավելի քաղաքացի կգրավեն, գաղտնիքներն մեկն ալ անոնց կողմէ օրենքի գործածության հանդեպ ցուցաբերված քարեքաղաքացւոյն է:

Ու այս իրողությունը առավելագույն չափով ճշմարիտ է և այդպես պետք է մնա քրիստոնեական ընկերությանց, այսինքն եկեղեցիներու համար: Մեծ են և հզոր այն եկեղեցիները, որ կանոնական օրենքը և կրոնական իշխանությունը կպահեն իրենց ուժը և հեղինակությունը. տկար ու քայքայված կամ քայքայվելու վրա են օրենք և կրոնական իշխանություն չիճանցող կամ չունեցող կրոնական համայնքները: Մենք պիտի չուզենք կարևոր ալս հարցը ավելի ընդլայնել, որ զմեզ հեռուները պիտի տաներ, այլ կբավականանանք իբրև եզրակացություն հիշել լոկ Պողոս Առաքյալի կարճ մեկ պատգամը, ուղղված՝ միավորությունը և կարգաւարդությունը կորսնցուցած իր ե-

* «Էջմիածին» սովորական ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Թուրքիայի հայոց պատրիարք, ամենապատիւ տ. Շնորհք արքեպ. Գալլաթյանի սույն սցեմալումն ու քովանդակալից մողվածը:

կեղեցիներեն մեկուն. «Ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ եւ ըստ կարգի լինիցի» (Ա. Կորնթ. ԺԴ 40):

Երբ անհատի քմայքը կամ կիրքը օրենք կդառնա, ամիսասփեկորեն կտիրե քառս: «Իր աչքին հաճո երևցածն ընկեր» ընկերության մը մեջ մայրական պրիմիտիվ սանդիսամատից վրա գտնվելու մշան է: Փաստն է՝ անհատի մը կամ ժողովուրդի մը պատկերայն, և պատմաբար՝ անոր շարունակ պատկի մնալուն:

Արդ, մեր մեջ բարոյական ու կրոնական անհիշխանության վերջին արտաճանգները դառնալ կուզան Անթիլիասն:

Նախքան այդ արտաճանգներու մատնանքով, միջանկյալ պարտինք ըսել, թե երբ կարևոր ու կենսական սկզբունքներու մասին կխոսինք, անձերը կիջնեն այնքա երկրորդական մակարդակի, մինչև իսկ կոտորածներ անոնց ներկայությունը: Հետևաբար երբ կձեռնարկենք ապօրենություններ մատնանքով, կառաջնորդվինք երկու հիմնական սկզբունքներով. առաջինը փիլիսոփայական ծանոթ դասական խոսքն է «Պրատոր կսիրեմ, բայց ճշմարտությունը ավելի կսիրեմ»: Երկրորդ. մեկը որ ընկերության մեջ չարիք կամ ապօրենություն մը կըմշարեն և ձայն չի բարձրացներ անոր դեմ, անուղղակի կերպով մասնակից կդառնա այդ չարիքին կամ կքաջալերե զայն: Մեզք այն խորն համոզումն ունինք, որ Անթիլիասի ներկա ընթացքը և ուղղությունը քանդիչ և վնասակար է հայաստանյայց եկեղեցիին համար ընդհանրապես և Անթիլիասի համար մասնավորապես:

Հետևաբար մինչև իսկ Կիլիկիո աթոռին և իր գահակալին բարիքին համար կուզենք կատարել այս մատնանքովները: Մեր դիրքը, իրեն մեկը հայ եկեղեցիի նվիրապետական աթոռներու գահակալներեն, կպարտադրե մեզի, այս անդրադարձը. վա՛յ մեզի, եթե չընենք զայն:

Կիլիկիո կաթողիկոսությունը ավելի քան հիսուն տարիներ առաջ իր կրած գրեթե մահացու հարվածեն փրկվեցավ շնորհիվ հայ եկեղեցիի նվիրապետական աթոռներու եղբայրական ձեռնավության և զոհողության: Այսօրվան Կիլիկիո աթոռին չորս օրինավոր թեմերեն երեքը Էջմիածնի Մայր Աթոռի իրավասության ներքև գտնվող թեմեր էին, որոնք Նորուսողեմի պատրիարքության խողովակով շնորհվեցան Կիլիկիո աթոռին, 1928-ին, ոտքի լվահելու և վերականգնողական ճանքուն մեջ դնելու համար զայն: Ու Կիլիկիո կաթողիկոսությունը շուրջ երեսուն տարիներ հետո ըստ աստվածաշնչական պատկերալից բացատրության, «գիրացաւ, ստուարացաւ, լայնացաւ... եւ

արհամարհեց զվեմն փրկութեան յիւրոյ» (Բ. Օրինաց ԼԲ. 15): (Գլխագրյալ մասը՝ ըստ եբրայական բնագրերի): Ու Անթիլիասը ի մշան երախտագիտության, իրեն շնորհված երեք թեմերու դիմաց ամուց կլրկին թիվով ուրիշ թեմեր ալ ինքը հափշտակեց Մայր Աթոռեն... Այսքանով ալ չի բավականանար. օրերս կփորձե հափշտակել ման Մայր Աթոռի բարոյական իրավասությունները:

Բարոյական իրավասության սահմաններու մեջ կատարված ոտնձգությունները մեջտեղ կուզան Անթիլիասեն ելած վերջին կոնդակին մեջ:

Այդ կոնդակով Կիլիկիո կաթողիկոսը ինքզինքը կներկայացնե այսպես. «Խորեն ծառայ Յիսուսի Քրիստոսի... Եպիսկոպոսապետ եւ կաթողիկոս ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈԹ (գլխագրյալ մեքին. Շ.) Մեծի Տանն Կիլիկիոյ...»: Նկատելի և զգահատելի պարագա մըն է, որ կոնդակի ճակատին տակված ու ներքև դրված կնիքներուն մեջ՝ ինչպես ման կաթողիկոսի ձեռագիր ստորագրության մեջ կպակսին վերև գլխագրված երկու բառերը: Այսուհանդերձ ոչ մեկ պատճառաբանությամբ կարողաքանա այդ երկու բառերուն գոյությունը կոնդակի սկզբնավորության մեջ:

Կրճա ըլլալ որ ինքնաներկայացման այս ձևը հնարողը և առաջին անգամ կիրարկողը Տեր Խորեն կաթողիկոսը եղած չըլլա, կրճա ըլլալ որ Կիլիկիո կաթողիկոսներեն մին կամ մյուսը պատահաբար, բայց ոչ երբեք հետևողաբար, գործածած ըլլան այդ բանաձևը, այսուհանդերձ սխալ մը սխալ ըլլալն չի դադիր, մինչև իսկ եթե մախընթացներ ունենա: Սխալ է Կիլիկիո կաթողիկոսներուն համար «ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈԹ» ավելորդության կցումը իրենց բնական տիտղոսին: Սխալ է այդ քերականորեն, սխալ է տրամաբանորեն և սխալ է կանոնական տեսակետեն:

Քերականորեն սխալ է, որովհետև այդ կոնդակին մեջ «Կաթողիկոս» հատկացյալը ունի արդեն իր օրինավոր ու բնական հատկացուցիչը, «Մեծի Տանն Կիլիկիոյ» որ կրքնորոշե սույն կաթողիկոսության իսկական, սլաինքն մասնավոր հանգամանքը: Որքան ատեն որ այդ վերոհիշյալ հատկացուցիչը կցյալ է «Կաթողիկոս» հատկացյալին, «Ամենայն Հայոց» ավելորդությունը ոչինչ կավելցնե այդ կաթողիկոսի ինքնության և իրավասության վրա, այլ լուկ կհիշեցնե շարժուն տղու մը, որ իր հոր գլխարկը կամ գավազանը կգործածե... Կիլիկիո կաթողիկոսը, ինք ծիծաղելի պիտի չգտնե՞ր արդյոք, եթե օրին մեկը հելլոսի առաջնորդը ինքզինքը կոչեր «Առաջնորդ ԱՄԵՆԱՅՆ

ՀԱՅՈՑ ԼԻԲԱՆԱԳԻ» կամ եթե Տրիպոլիի բախման ինքզինքը հորջորջեր «Հոգևոր հովիվ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տրիպոլի»... Ասոցցմե տարբեր չէ Կիլիկիո Աթոռին գա-
նակալը կոչել «Կաթողիկոս ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Մեծի Տանն Կիլիկիոյ»:

Ինչ որ քերականորեն արդարացում չու-
նի, կրլա անտրամաբանական: Թարմա-
տար և անհիմաստ ավելորդադրություն մը
կցել իր անուհին իբրև տիտղոս պատիվ չի
բերեր ունե մեկին, երբ մանավանդ ենթա-
կան Ավետարանի և Աստուծո պաշտոնյա է
և կաթողիկոսի պես լուրջ ու ծանրակշիռ
հանգամանք ունի: Ինքզինքը պատիվ ու ան-
բավարար տեսնողը միայն կաշխատի կապ-
կել իրմե մեծերը, այն պատրանքը տալու,
կամ ինքզինքը խաբելու համար, թե մեծե-
րու համահավասար շարքին մեջ կգտնվի:
Նման բարդույթ մը, վստահ ենք որ ոչ ոք
պիտի ուզեր տեսնել ոչ մեկ Կիլիկիո Կա-
թողիկոսին վրա: Ամեն ոք իր եղածին մեջ,
իր իրական իսկության մեջ հաճելի և հար-
գելի է: Պողոս Առաքյալը կհրավիրե ամեն-
քուս ըլլալ մեր եղածը և ոչ թե անկե տար-
բեր բան մը երևիլ՝ «Խորաքանչիւր ոք յոր
կոչումն կոչեցաւ, նոյաբք, ի նմին կացցէ
առաջի Աստուծոյ» (Ա. Կորնթ. Ա. 24):

Հակակառնական է, Կիլիկիո Կաթողի-
կոսին համար այս ավելորդության գործա-
ծությունը պարզ այն պատճառով, որ այդ
տիտղոսը բացառաբար Մայր Աթոռի Գա-
նակալին կվերաբերի իբրև արդարև և իրա-
վամբ «Կաթողիկոս ԱՄԵՆԱՅՆ ՀԱ-
ՅՈՑ»: Այստեղ «կաթողիկոս» բառը իբրև
հատկացյալ ունի «ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»
հատկացուցիչը միայն, որ կընդունի էու-
թյուն մը և ԸՆԴՀԱՆՐԱՍԿԱՆ հանգամանքը
Մայր Աթոռ ս. Էջմիածնի Հայրապետին:

Սակայն Կիլիկիո Կաթողիկոսի կողմն
այդ կոնդակին մեջ գործված նրկորդ սահ-
մանազանցությունը ավելի ծանրակշիռ է, և
որչալի մեք գիտենք, անմախընթաց է: Սա
կենթադրե կանոնադրության նպատակին և
էության մասին պոռացող անգիտություն:

Կիլիկիո Կաթողիկոսը իր կոնդակը կուղ-
ղե նաև «Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ.
Վազգէնի Առաջնոյ»:

Հոգևոր պետ մը կոնդակ կգրե լոկ իր ի-
րավասության ներքև գտնվող թեմական ու
համայնքային իշխանությանց և իր սեփա-
կան հավատացյալ հոտին: Համայնքային
հանգամանք ունեցող կոնդակով մը հոգևոր
պետը առհասարակ հորդոր և հրահանգ
կուտս իր անմիջական իրավասության և
իշխանության ներքև գտնվող հոգևորական-
ներուն և հասարակության: Նրեալայեցեք
որ Կիլիկիո Կաթողիկոսը իր հայրական
նրահանգները կամ հորդորները ուղղել

նաև Ամենայն Հայոց Հայրապետին... Բա-
րեբախտաբար այս անհարմար կացությունը
փրկված է կոնդակին մեջ, ուր Կիլիկիո Կա-
թողիկոսը իր պատվերները սահմանա-
փակված է իր անմիջական շրջանակին մեջ՝
սա կերպով. «Այսու մեր կոնդակաւ կո-
պատուիրենք Մե՛ր (գլխագործը մերին. Շ.)
թեմակալ առաջնորդներուն, արքեպիսկո-
պոսներուն»... Այսուհանդերձ Ամենայն Հա-
յոց Հայրապետի անվան ներառությունը
Կիլիկիո Կաթողիկոսի մը կոնդակին հաս-
ցեագրության բաժնին մեջ ոչ մեկ օրենքով
և ոչ մեկ տրամաբանությամբ կարդարա-
նա և ներելի չէ:

Ամենայն Հայոց Հայրապետը իրավունք
ունի իր կոնդակները ուղղելու նաև Կիլիկիո
Կաթողիկոսին, երկու համամասն պատ-
ճառներով: Նայա՛ որովհետև Կիլիկիո Կա-
թողիկոսությունը ի հոգևորն ենթակա է Ա-
մենայն Հայոց Հայրապետության, այլապես
Հայաստանյայց Առաքելական եկեղեցին
մեկ չի կրնար ըլլալ: Երկրորդ՝ որովհետև
Կիլիկիո Կաթողիկոսությունը ալ կգտնվի
ընդհանուր շրջանակին մեջ հայ եկեղեցի-
ին, գոր կգլխավորե, կմարմնավորե և կը-
ներկայացնե Ամենայն Հայոց կաթողիկոսը:
Օրին մեկը սակայն եթե—Աստված մի ա-
րասցե—Կիլիկիո Կաթողիկոս մը պաշտո-
նապես հայտարարե, որ ինք թուրքովին
անցաւ ու անկախ եկեղեցի մըն է, և ոչ մեկ
ուրիշ կապ ունի Ամենայն Հայոց Հայրապե-
տության հետ, բացի դավաճության և ծեսի
գողեն, այն ատեն ինքնին դուրս հայտա-
րարված պիտի ըլլա Հայաստանյայց եկե-
ղեցիի վարչական շրջանակեն, այսինքն
անոր «օրգանիկ» միությունեն: Այն ատեն
միայն Ամենայն Հայոց Հայրապետը իր կոն-
դակներու հասցեագրության մեջ չհիշեր Կի-
լիկիո Կաթողիկոսությունը, ինչպես ներկա-
յիս չհիշեր հայ Կաթոլիկ և հայ թողոքական
եկեղեցիները: Մենք սակայն վստահ ենք,
որ ոչ մեկ Կիլիկիո Կաթողիկոս նման աղե-
տաքեր հայտարարություն մը ընելու հանձ-
նառության ներքև պիտի դնե ինքզինքը:

Ամենն ողբալի երևույթը, սակայն, այն
է, որ այս հակակառնական ունեցություն-
ները կպատահին ս. Ներսես Շնորհալի
Հայրապետի մահվան 800-ամյակի տոնա-
կատարության հայտարարության առթիվ:
Շնորհալի Հայրապետը ամենն առաջ և
ամենն ավելի պիտի դատապարտեր այս
ջխտիչ սահմանազանցությունները: Ան, որ
քրիստոնեական եկեղեցիները միացյալ
տեսնելու երազով բռնկած էր, և «Աստ-
վածային սիրո հաղորդությունը վերահաս-
տատելու» տեսիլքով տարված էր, խորա-
պես պիտի վշտանար տեսնելով, որ իր հի-
շատակի ոգևորչույթն ասիո կծուսույն նման

տգեղ և դատապարտելի երևույթներու դըր-
սելորման իր եկեղեցիին մեջ:

Մենք ալևս չենք անդրադառնար այն
մյուս ծիծաղելի երևույթին, թե երբ Ամն-
նայն Հայոց Հայրապետը տարվույս սուս-
ջին ամիսեն արդեն իսկ ընդհանրական իր
կոնդակով հրապարակած էր այս հանդի-
սակատարությունը և իր հայրապետական
հրահանգները ղրկած էր արդեն ազգին
ընտան, աղևս պետք կամա՞ր արդյոք, որ
չորս ամիսներ հետո նույն հարցին առնչու-
թյամբ կոնդակ հաներ նաև Կիլիկիո Կաթո-
ղիկոսը, չմոռանալով խնդիրը հանձնել նաև
Ամենայն Հայոց Հայրապետի նկատառ-
ման...

Մենք այս խնդիրներուն ավելի հանգա-
մանորեն անդրադառնալու առիթ պիտի
ունենանք ուրիշ առնչությամբ: Այս պատե-

հությամբ բավ կհամարենք եզրակացնել,
որ մեր կրոնական ու եկեղեցական կյանքը
իր պարզած ներկա քառասյին կացությունն
դուրս պիտի գա երբ հոգևորականներս,
հատկապես նվիրապետական պատասխա-
նատու անձներու վրա գտնվողներս, մեզի
ուղեցույց և առաջնորդ ճանչնանք աստվա-
ծաշնչական պատգամները և եկեղեցիի դա-
րավոր կանոնական օրենքները: Անալով
հատկապես Պետրոս Առաքյալի եղբայրա-
կան կոչին. «Ջերիցունս այսուհետեւ սուս-
չեմ, իբրեւ զերիցակից ... արածեցէք, որ ի
ձեզ հօտդ է Աստուծոյ, վերակացու լինել
նոցա... մի իբրեւ տիրելով վիճակացն, ալ
լինել օրինակ հօտին, զի յերեւել Հովուսպե-
տին ընդունիցիք զանթառամ վառաց պա-
կըն»—Ա. Պետ. Ե. 1—4:





ՀԱՅ ՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռիս Դիվանը լիազորված է խոր վշտով հայտնելու, թե սույն թվի հունիսի 10-ի լույս 11-ի գիշերը Մայր տաճարի թանգարանից գողացված են 25 թանգարանային եկեղեցական իրեղեններ՝ մեծավ մասամբ ֆիլիգրամ աշխատված խաչեր, այդ թվում նաև Աջերը Մծքնա սուրբ Հակոբ Հայրապետի (Երկրորդ Աջը) և սուրբ Արիստակես կաթողիկոսի, բոլորը արծաթ-ոսկեջրած, ումանք զարդարված ոչ թանկարժեք գունավոր քարերով:

Մեր երկրի պատկան իշխանությունները առաջին իսկ օրից սկսյալ մինչև այսօր, ամենայն սրտցավությամբ իրենց կարելին ի գործ են դնում հայտնաբերելու համար չարագործներին և Մայր Աթոռիս վերադարձնելու գողացված վերոհիշյալ նվիրական իրեղենները:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՐՈՒՍ

28-ր սպասուսի 1873 թ.,

Ա. Լեւիաձից

ՀԱՅ ՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վերջերս հետաքննություն լույս է տեսել Սիմոն Հովիվյանի «Սրտրաց խոտովանություններ» գիրքը, որը Մայր Աթոռիս, հոգևոր ճեմարանի և մայրավանքի պաշտոնեության հասցեին ուղղված գրպարտությունների, ինչպես նաև մայր հայրենիքի մասին վատառողջ դատումների մի անհիղճ շարադրանք է:

Մայր Աթոռիս իր վրդովմունքն է արտահայտում և խստորեն դատաւարտում հեղինակի անազնիվ և ոչնչով չարդարացվող վարքագիծն ու ապերախությունը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՐՈՒՍ

17-ը սպասուսի 1873 թ.,

Ա. Լեւիաձից





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ղ Ի Մ

Հուլիսի 20-ին, կիրակի.—Վարդավառ:
Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում վրահայոց թեմի առաջնորդական փոխանորդ տ. Գևորգ Ծ. վրդ. Սերայդարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Արասցուք երիս տաղաարս՝ մի քեզ եւ մի Մովսիսի եւ մի Եղիայի» (Մատթ. ԺԷ 4) քնարանով:

Հուլիսի 20-ին, երկուշաբթի.—Բ օր Վարդավառի:

Մայր տաճարագ է մատուցում տ. Խորեն վրդ. Էջումյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն «վասն համօրէն ցնցեցելոց»:

Սեպտեմբերի 8-ին, ուրբաթ.—Այսօր Մայր Աթոռի միաբանությունը ուխտի է մեկնում դեպի Դիլիջան՝ Հաղարծնի վանքը:

Սեպտեմբերի 8-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Վարդավառի:

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Սեպտեմբերի 12-ին, կիրակի.—Վերափոխումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արիս Ծ. վրդ. Շիրվանյանը: Հավարտ ս. պատարագի տևողի է ունե-

ցում խալիղօրհնության կարգը և ընթերցվում ս. Ներսես Շնորհալու «Ալօթք խալիղօրհնութեան»-ը:

Սեպտեմբերի 18-ին, երկուշաբթի.—Բ օր Վերափոխման:

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բելլերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն «վասն համօրէն ցնցեցելոց»:

Սեպտեմբերի 18-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Վերափոխման:

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը:

Սեպտեմբերի 21-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ վերադարձավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Կիսլովոդսկի «Կրանի կամեն» առողջավայրից, ուր հանգրտանում էր տ. Կոմիտաս արք. Տեր-Ստեփանյանի հետ:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորում և բարի գալուստ են մաղթում Մայր Աթոռի միաբանները, գլխավորությամբ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանի:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորում է նաև ՀՍՍՀ Միեմիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ ընկ. Ս. Գասպարյանը:



ՆՆԿՈՂՈՍ ԹԱՀԱՄԱՋՅԱՆ

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԸ
ԵՎ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՏԸ

Հին ու միջին դարերից եկող պատմական, գրական և ընդհանրապես ձեռագրական մի ամբողջ շարք տվյալներ հավասարապես վերաբերում են ս. Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի երաժշտական գործունեությանը։ Որպես այդպիսիք դրանք համեմատված ու քննական մոտեցմամբ օգտագործված են արդեն մեր «Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը» ուսումնասիրության մեջ¹։ Ավելորդ կլիներ այստեղ կրկնել տղայուրագիտական նույն մանրախոյզ աշխատանքը, տրամաբանական շեշտերի փոքր խնայլ տեղարաշխմամբ։ Ուստի օգտվելով հիշյալ աշխատանքի արդյունքներից, ու հաշվի առնելով նաև մի խումբ լրացուցիչ, հատկապես Սահակ Պարթևի անձի և գործի հետ առնչվող հա-

վելյալ տվյալներ², ուղղակի անցնենք դրանց ողջ միակցությամբ պայմանավորվող

¹ Հմտ.՝ Վարդ Սրբյոն Սահակյանի «հայոց հայրապետի» (Հ. Մ. Ավգերյան, Լիակատար վարք և վկայաբանություն սրբոց, Վենետիկ, 1811, էջ 191—191): Պատմություն վասն սրբոյն Սահակյան հայրապետին և Մեսրոպյան վարդապետին (Սոփեթր հայկականք, Բ. Վենետիկ, 1859, էջ 5—42): Հ. Գ. Զարպհանալյան, Պատմություն հայերեն դպրութեան (Բիճ մատենագրություն), Վենետիկ, 1865, էջ 185—172: Հ. Գ. Զարպհանալյան, Հայկական թարգմանությունը մախնեաց, Վենետիկ, 1888, էջ 67—59, 245—272 և այլուր: Ե. Տնտեսյան, Նկարագիր հրգոց Հայաստանեայց եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1874, էջ 140—141: Ս. Ոսկանի Պարթև (արտատպություն «Լուսնայ» հանդեսից), Թիֆլիս, 1892: Հ. Ն. Ակիճյան, Մեծն Սահակ կաթողիկոս հայոց, «Հանդես ամսօրյա» 1895, էջ 470—504: Հ. Ն. Ակիճյան, Ս. Ոսկանի վերագրված կանոնները, «Հանդես ամսօրյա» 1840, № 1—12, էջ 48, 1847, № 1, էջ 2: Հ. Ղ. Լիլիշան, Հուշիկ հայրեցաց հայոց, Ա. Վենետիկ, 1820, էջ 280—310: Մ. արք. Օրմանյուց, Ազգապատում, Ա. հատ., մասն Ա, Պետրոս, 1850, էջ 255—320: Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, Երևան, 1948, էջ 350: Մ. Արևիկյան, Երեւո, Գ, Երևան, 1968, էջ 103—104, 194—196, 527—528 և այլուր:

² «Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964: Տես հատկապես էջ 182—174, որ քննված են այն աղբյուրները, որոնք ցույց են տալիս նաև Սահակ Պարթևի նշանակալի մասնակցությունը ծայրագնակները կայացվողությանը գործին, նրա երաժշտական կարծիքները գործունեությունում ու խոսքերում լիակատար վաստակը:

հարցերի առաջադրումները և քննությանը: Այդ հարցերն են՝ Սահակ Պարթևի ընդհանուր ու երաժշտական մտահորիզոնի բացահայտումը, հայ երաժշտության ձայնեղանակների վերակարգավորումները, մանկավարժական գործունեությունը, երաժշտա-բանաստեղծական ժառանգությունը, և, վերջապես, նպաստը ծիսական կարևոր մատենների հայացմանն ու հայրապետական կարգադրություններն այդ մասին:

Ա.

Հայ իրականության արտակարգ երևույթներից է Սահակ Պարթևը, ընդհանուր ու երաժշտական խոր և ընդարձակ գիտելիքներով: Ներսես Մեծի որդին՝ դաստիարակվել ու կրթվել էր հատուկ պայմաններում, և տարիներ շարունակ ուսանել Կեսարիայի և Բյուզանդիայի հռչակված դպրոցներում, շփվել ժամանակի կարկառուն դեմքերի հետ: Դ. Փարպեցին հետևյալն է հաղորդում, ցույց տալու համար ս. Սահակի ստացած կրթության բարձր աստիճանը. «յոթնույցեալ ամցուցանել վարժիք զբազում գիտնովքն Յուդեաց, եղեալ կատարելապէս հմուտ երգողական տաղիցն և հռետորական յորդասաց յայտնաբանութեան, ևս առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցանիք»³:

Մի կողմ դնենք համեմատության մեջ չափազանցության դիմելու միտումը: Առիթը, որից օգտվում է Փարպեցին, հաղորդելու համար սույն տեղեկությունը, շատ մասնավոր է. թե ինչպես Մաշտոցն ու աշակերտները, թարգմանությանը ընթացքում հաճախ դիմում էին կաթողիկոսին, նրանից սովորելու «զաթությանիցն գաղափար», այսինքն՝ վանկի մասին ուսմունքին: Վերաբերող այս կամ այն գիտելիքը: Հասկանալի է, որեւմն, թե ինչու նա չի շոշափում, ասենք՝ Սահակի աստվածաբանական պատրաստությունը, լեզուների իմացությունը (հայերեն, հունարեն, ասորերեն, պարսկերեն) և առհասարակ «ներքին» ու «արտաքին» մարզերին վերաբերող այն բոլոր հմտությունները, որոնք հնարավոր դարձրին հոգեվոր, մշակութային և պետական վիթխարի գործչի կազմավորումը: Գործչի, որն արեվելյան-քրիստոնեական քաղաքակրթությանը ընծայեց ազգայնացված մի նոր ու ազատամիտ եկեղեցի, գրական մի նոր ուճի լեզու, և «Թագուհի թարգմանութեանց» կոչվող մեծարժեք մի կոթող:

Նմանապես, Սահակ Պարթևի երաժշտական հակումների մասին Փարպեցու խոսքերը, տվյալ կապակցության մեջ, լուրջ են հաստատում, որ հայրապետը հմուտ է եղել հունական «երգողական» (իմա՝ ձայնավոր) տաղերին վերաբերող երաժշտա-քերականական հիմնալուրջ ուսմունքի մասնահատուկ բնագավառում, ու դրանով՝ նաև ընդհանրապես երաժշտարվեստի հարցերում: Այս կետը, սակայն, «հռետորական յորդասաց յայտնաբանութեան» և «փիլիսոփայական արուեստից» հետ իրականում կոչված է ընդհանուր գծերով քննորոշելու համաքրիստոնեական երևելի այն միջավայրը, որտեղ ուսանել է ս. Սահակը, ու նաև թափանցիկ ակնարկով հարազատեցնելու նրան այդ միջավայրում IV—V դդ. ապրած մի ամբողջ շարք նշանավոր գործիչների թե՛ նրանց աշակերտների հետ (ինչպես դա ճիշտ ընկալեց ժամանակին Հ. Դ. Ալիշանը):

Հիրավի, Սահակի ուսումնառության ու հետագա քեղմնավոր գործունեության բոլոր պարագաները ևս զախս են թելադրելու հետևյալը: Լուսավորչի տոհմի շառավիղն ու Մամիկոնյանների տան ազգականը Հայաստանում ուներ, անշուշտ, արյունակից, ազգային-հայրենասիրական իդեալներով տոգորված և արժանի գործակիցներ ի դեմս Մեսրոպ Մաշտոցի և Վուսնշապուհի: Բայց ուսման, կրթության, հոգևոր կոչման և ընդհանուր զաղափարախոսության հողերի վրա նա մոտիկ ու սրտակից էր մի շարյ օտարազգի (հիմնականում հույն) կարեւորում գործիչների հետ ևս, որոնք էին նրա ավագ, տարեկից ու կրտսեր ժամանակակիցները. Աթանաս Ալեքսանդրացին (Մեծն) և Կյուրեղ Երուսաղեմացին, Բարսեղ Կեսարացին, եղբայրը՝ Գրիգոր Նյուսացին, Գրիգոր Աստվածաբանը, Եփիման Կիպրացին, Հովհան Ոսկեբերաբը, Կյուրեղ Ալեքսանդրացին, Պրոկ Կաստանդուպոլսեցին, Ակակիոս Եպիսկոպոսը (Մելիտենի) և ուրիշներ:

Նրանցից ոմանք Սահակ Պարթևի ընկերակից-թարեւսմունքն են եղել, ոմանք նրա թղթակիցները, ուրիշներ՝ ավելի Ներսես Մեծին ճանաչողներ՝ նրան հայրաբար ընդունելով խրատել, դաստիարակել են, ճանապարհ են ցույց տվել և այլն: Իսկ Սահակն ինքը հոգեհարազուտ է զգացել իրեն նրանց բոլորի նկատմամբ: Ոչ միայն զարգացման աստիճանով, այլև խառնվածքով:

³ Հմմտ. մեր հոդվածը՝ Դիտողություն Փարպեցու աշխատության մեջ Սահակ Պարթևին վերաբերող մի արտահայտության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 3, էջ 177—181:

³ Չախարայ Փարպեցու Պատմություն հայոց և Թուրք առ վահան Մամիկոնյան, Տիպիս, 1904, էջ 15—10:

Լել ոչ միայն նրանց, այլ միևնույն պատմա-
շրջանում ծաղկած արևմտյան թե արևել-
յան մյուս հայրերի նկատմամբ ևս՝ Նփրեմ
Խորիճ Ասորու, Ամբրոսիոսի, Հերոնիմոսի
և մանավանդ ս. Օգոստինոսի: Մեզ համար
կարևոր է, որ այս կարգի հոգևորականը,
մուտք գործելով հայ մասնագիտացված
երգարվեստի քննադատը, այդ արվեստի
բուն իսկ կազմավորման շրջանում, հան-
դես կզար հատուկ առաքելությամբ: Եվ ի-
րոք, այն ամենի ինչ ասել ենք Մեսրոպ
Մաշտոցի մասին, հայ երգարվեստի զար-
գացման մեջ նրա խաղացած բացառիկ ու
վճռող դերի առաջնությունը (և ուղջ
ծավալով) երկրորդելի է նաև Սահակ Պար-
թևյի վերաբերյալ: Այնպես, որ մեր առջև
ծառացող խնդիրն այստեղ, իր կարևոր մեկ
մասով, հանգում է՝ միևնույն նպատակները
նետապնդած երկու տարբեր անհատակա-
նությունների գործունեության ու ժառան-
գության մեջ առկա տարբերիչ երանգների
որոշմանը:

Բ.

Ս. Սահակի և ս. Մաշտոցի աշխատու-
թյամբ հայ երաժշտության ծայնեղանակնե-
րի վերակարգավորությունը ժամանակին
քննել էինք գլխավոր գծերով և սկզբունք-
ային հարթության վրա, մի կողմ թողնե-
լով մասնավոր խնդիրներ և նույնիսկ վերա-
կարգավորված ծայնեղանակների թվաքա-
նակի ու դրանց և ծիսական մատյանների
հարաբերության հարցերը: Այժմ անհրա-
մեջտ է անդրադառնալ միշտ վերջին կե-
տիներին:

Դիտենք, որ Հայաստանում, հեթանոսու-
թյան շրջանում, տեսության մեջ հաշվի առ-
նված գլխավոր ծայնեղանակները թվով
չորսն են եղել⁵: Հայտնի չէ, թե ծայնեղա-
նակների ինչպիսի համակարգ էր վաղե-
րացրել հայ եկեղեցին IV դարում⁶: Իրենց
թվաքանակով, սակայն, գլխավոր ծայնե-
ղանակները այս շրջանում ևս չորսից չեն
անցել: Դա պարզ հասկացվում է նույնիսկ
Հայտնավորներից անցած հնագույն մի
գրվածքից, որտեղ հաստատագրված տե-
ղեկությունների հետ հաշվի է նստել Լուսի-
տաս վարդապետը ևս⁷: Սահակ Պարթևի,

Մեսրոպ Մաշտոցի ու նրանց աշակերտների
նաև երաժշտական գործունեության մասին
պատմող այդ գրվածքում կարդում ենք.

«Արարի՛ն և երգս շարականաց և կարգե-
ցին եղանակս ամենայն ձայնից, զորս բա-
ժանեաց ի միմեանց սուրբ հայրապետն,
հոգելի տերն՝ Իսահակ Պարթևն՝ տասն
ձայնս ըստ թուղ ժ արարածոց, որ են. եր-
կինք և երկնայինք, երկիր և երկրայինք,
ծովք և ծովայինք, օդք և օդայինք, հրեշ-
տակք և մարդիկ: Այլն ըստ թուղ ժ-բան-
եան օրինացն Աստուծոյ...: Այլն ժ փոր-
ձանացն Արարիմու...: Այլն ժ աղի քնա-
րին, որով Դաիթ զսաղմոսն երգէր...: Ձի
ժ սուրբ է և նուէր Աստուծոյ...: Եւ ինքն
ժ ի չորից գոյանայ...: Այսպէս և ի Դ ձայ-
նից ժ բարդեցաւ: Եւ Դ ձայնից ի չորից
տարբոցս ունին գոյություն: Որպէս և է՝ ա-
ռաջի ձայնն ի հողոյն: Եւ երկրորդն՝ ի
ջրոյն: Երրորդն՝ ի փառոյն: Եւ չորրորդն՝ ի
հրոյն: Եւ ի Դ ձայնից բաժանեաց զչորս
կողմնն. առաջի կողմն, աագ կողմն, վառ,
վերջինն և Բ ըստեղիքն, որք ունին և այլ
յատկությունս: Ձի առաջի ձայնն ի հիսնա-
կանէն է, երկուն (sic!) ի դարբէնէ է, ե-
րեքն՝ ի գետոց, Դ-Գ՝ լաղօրեաց, Ե-Գ՝ յեր-
կաթոյ, Զ-Գ՝ ի ծովու կենդանեաց, Է-Գ՝ ի
ծովու ծիսանաց, Ը-Գ՝ յանասնոց, Թ-Գ՝ ի գա-
զանաց, Ժ-Գ՝ ի թշնոց, որովք միշտ փա-
ռաբանի Աստուած ի բարձունս»⁸:

Խոսքն այստեղ վերաբերում է հայոց հին
Սաղմոսարան-ժամագրքին կապված ութ-
նայնի համակարգին: Այն, որ վերջինս ընդ-
գրկել է նաև ստեղծ եղանակներ, երևում է
ինչպես մեզ հասած մեղեդիական նյութից⁹,
այնպես և վաղ միջնադարյան հայ գիտնա-
կանների երաժշտա-տեսական ասույթնե-

թյուններ, Երևան, 1941, էջ 116 (որտեղ գիտնակա-
նը իրավացիորեն հատուկ մատնանշում է մեզ հի-
տադրարող գրվածքի այն տեղիները, որ ծայնեղա-
նակների վերաբերյալ հաղորդվում է՝ «ի Դ ձայնից
ժ բարդեցաւ», «և Դ ձայնից բաժանեաց զչորս կող-
մնն» և այլն):

⁵ Կիրք որ կոչի Այսմաուրբ, Կ. Պոլիս, 1730, էջ
10—16 (ճան՝ Մատենադարան, ձև. № 7862, էջ
62ա—բ): Անհրաժեշտ է հիշեցնել, որ ինչպես ցույց
տվեց Ռետագոտությունը, V դարասկզբում հայոց
ծայնեղանակների վերակարգավորումը իրագործել
և՛ Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը (միա-
սին): Տես Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր
երգարվեստը, Եզվ. հրատ., էջ 181—208:

⁶ Հատկապես կանոնագրությունների գոգորդությամբ
հարատևած երաժշտությունից: Հմտ. մեր հողված-
ները՝ Հասարակ օրերի կանոնագրությունը, «Էջմիա-
նից», 1971, Դ, և Հանդիսավոր օրերի կանոնագրու-
նյունը, «Էջմիանից», 1971, Թ ու ԺԱ:

⁵ Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվես-
տը, Եզվ. հրատ., էջ 174—178:

⁶ Հնդկական տեսություն հայոց հին և միջնադար-
յան երաժշտության պատմության (Ա), ԳԱ «Լրա-
բեր», 1970, № 10, էջ 28:

⁷ Հմտ.՝ Հասարակ օրերի կանոնագրությունը,
«Էջմիանից», 1971, Դ, էջ 37—38:

⁸ Տես Կոմիտաս, Հողվածներ և ուսումնասիրու-

րատնել է շուրջ կես հազարամյակ¹⁹, հնագիտական մեկն է բրիտանական արվեստի պատմության մեջ²⁰։

Գ.

Տարված լինելով նաև ճգնափորական կյանքով, Սահակ Պարթևը տակավին գրեթե գյուտից առաջ աշակերտներ է ունեցել, թվով 80, որոնց հետ միասին ժամանակի մեծ մասը հատկացրել է պաշտոններգությանը, ինչպես պարզ տեղեկացում է Խորենացին։ «Բանգի ստացա աշակերտս վաթսուհմ ըստ նմանության մայրաքաղաքացն սպուդեից, արք կրօնաւորք, խարազնագետք, երկաթապատք, բոկագնացք, որք յար ընդ նմա շրջէին. որովք մշտընջեմաւոր պաշտամամք կատարէր գկանոցն, որպէս զայն որք յանապատսն էին, և հոգայր զաշխարհս, որպէս զայնս որք յաշխարհի են»²¹։

Պատմահոր վերջին խոսքերը (աշխարհակնների հոգևոր կարիքները ևս հոգալու մասին)՝ փաստորեն այն են վկայում, թե ու. Սահակ ու իր 80 աշակերտները մինչև գրեթե գյուտը գրադվել են նաև բանավոր թարգմանություններով, զանգվածներից սովորեցնելով հայերենի վերածված տաղմունքներ, աղոթքներ, բացատրելով դրանց իմաստը և այլն²²։ Գրեթե գյուտից հետո սահակ-մեսրոպյան նախկին աշակերտները երկու մեծ ուսուցիչների անմիջական օգնականները դարձան, ի հարկին արտասանման (եղեսիա, Բյուզանդիա) մեկնելով, այնտեղից Աստվածաշնչի և ծիսական ու այլ մատյանների ընտիր օրինակներ բերելով և թարգմանական աշխատանքներից մասնակցելով։ Իսկ նորաստեղծ դպրոցների համար հատկապես ժողովեցին շնորհալի ուրիշ մանուկներ ևս, որոնք ուսումնառությունից հետո լծվելով հայ գրավոր մշակույթի կառուցման նույն գործին, ան-

վանվեցին կրտսեր թարգմանիչներ կամ երկրորդ աշակերտներ։ Սրանցից ընտրյալներ նույնպես մեկնեցին արտասահման (Ալեքսանդրիա, Բյուզանդիա, Աթենք), ուսումը լրացնելու։ Մշակության հիշյալ մեծ կենտրոններում սահակ-մեսրոպյան թե առաջին, և թե երկրորդ աշակերտության ներկայացուցիչները հմտանում էին նաև երաժշտարվեստի տեսությանն ու գործնականին վերաբերող հարցերում։

«Եւ իսկ և իսկ ի հրամանէ մեծիւ Սահակայ ժողովեալ մանկունս խոհեմամիտս— տեղեկացնում է անանուն կենսագիրը, թեպետև շփոթելով առաջին ու երկրորդ աշակերտության խնդրին կապված հանգամանքները— տրամախոս, քաջուշեղս, փափկավանգս, և դպրոցս ըստ գաւառաց գաւառաց կարգէ. ուսուցանել մեծով պընդութեամբ. և հարիւր տասն ամ էր ի սրբոյն Գրիգորէ յորժամ գտաւ գիր ազգիս մերոյ. և զայնչափ ժամանակս ի յայլալեզու դեգերանս էին տատանեալ, վասն որոյ առաւել փոյթ յանձին ունէին գի երազ, յորժեսցին մանկունք յիւրաքանչիւր տեղիս, յորոց ընտրեցին թոռով վաթսուն յաշակերտելոցն, գառուել ուշիմս և զփափկածայնս և զերկարագիս, և առաքեցին յազգս և ի լեզուս օտար գաւառաց, ուսանել իմաստութիւն և արուեստախօսութիւն, և առնել թարգմանութիւն... Եւ այսպէս— շարունակում է կենսագիրը, այլալեզու խոշոր քաղաքներում ջանասիրարար ուսանած հայ պատանիների մասին—...ծրանային՝ տքնէին, աշխատէին՝ հսրցասէր լինէին ուսանելով, կըրթելով, վարժելով, վաստակելով, պատրաստելով զանձինս ի յերկս օգտակարս, և ի գործս շահաւետս, ոմանք գտառից գծագրութիւնս շահաւորեալ, ոմանք զիմաստս հաւաքեալ, զուսումնականն, զբնաբանականն, զերկրաչափականն, զհամարողականն, զերաժշտականն, զաստեղաբաշխականն, զքերականն և զքերդողականն. ըզգործնականն և զտեսական իմաստասիրութիւն և զմասունս նոցա որք են թոռով երկուտասան»²³։

Գալով Հայաստանի տարբեր վայրերում գործած նոր դպրոցներին, արդեն գիտենք, որ դրանցում Մաշտոցը ուսուցանում էր նաև հայ երաժշտության վերակարգավորված ձայնեղանակները²⁴։ Նույնը անում էր Սահակ Պարթևը ևս, ու հավանաբար՝ ավելի ընդլայնված ծրագրով՝ գործին ծայր

¹⁹ Կցուրդ երգերին վերաբերող ձայնեղանակները ևս, որոնք համակարգեց Ստեփանոս Սյունեցի Բ-ը, Սաղմոսարանին կապված եղանակների միակցությունը ետ մղելով նրա տեղը բռնցիցն «Երգմտիքի» կանոնացմանը զուգընթացաբար, ուստի նույնպես՝ IX—X դարերում։

²⁰ Հմմտ. G. Reese, Music in the Middle Ages, New-York, 1940, էջ 71—75 (որ քրիստոնեական ուր-ձայնի վարդապետության ծագմանը վերաբերող հնագույն փաստերից առաջ թերված ու բնմարկված ևն լոկ միջն V) դարը հասնող տվյալներ. իսկ հայկական ութամասն Սաղմոսարանի ձևավորումը վերաբերում է V դարասկզբին)։

²¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, Տըփուիս, 1918, էջ 320։

²² Ազգապատում, Շշվ. հրատ., էջ 281։

²³ Պատմութիւն վասն սրբոյն Սահակայ Ռայրապետի... Ստեփան, Շշվ. հրատ., էջ 18—19։

²⁴ Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը, Շշվ. հրատ., էջ 178—184։

տալով ձայնեղանակների սկսվածքներից²⁵, հասնելու համար մինչև ստեղի եղանակները: Խնդիրն այն է, որ Սահակ Պարթևը իր մանկավարժական գործունեությունը կենտրոնացնում էր մեկ դպրոցում՝ Վաղարշապատի վարդապետանոցում, որը հարց մայր ուսումնարանն էր (ու մնաց մինչև V դարի վերջերը):

Սահակ-մեսրոպյան առաջին աշակերտներից որպես երաժիշտ երեմիան է միայն հանվանե հայտնի: Նրան կորյունը «աստուածասէր պաշտօնէից» գլխավոր է կոչում²⁶, խորենացին՝ «սարկազապետ»²⁷: Սյունների երաժիշտ լինելու մասին որոշակի ոչինչ չգիտենք: Հարության ավագ օրհնությունների տաղանդավոր հեղինակ Ստեփանոս Սյունեցի Ա-ը, ըստ բոլոր տվյալների, պատկանել է կրտսեր աշակերտների վաղաճին²⁸: Վերջինիս մեջ կարկառուն երաժիշտներ են եղել նաև՝ Հովհան Մանդակունին²⁹ և Գրուտ Արահեզացին, Մովսես խորենացին³⁰ և Դավիթ Անհաղթը³¹: Անհրճարին է անտեսել մշակութային վաղ-քրիստոնեական համաշխարհային կենտրոնների խոշոր դերը ման ավագ ու կրտսեր թարգմանիչների երաժշտական կրթության մեջ: Մինչդուռ ժամանակ, սակայն, նրանց մտաբերելիս, անհրաժեշտաբար գիտակցում ենք արդեն՝ սահակ-մեսրոպյան հոգաժության ու մանկավարժական գործունեության մեծագույն նշանակությունը ևս՝ նույն հարցում:

Դ.

Սահակ Պարթևի թողած ժառանգության (հատկապես ինքնուրույն, ոչ թարգմանական գործերի) մեջ կարևորագույն տեղ ունի նրա երաժշտա-բանաստեղծական ստեղծագործությունը: Այն քաղկացած է եղանակավոր քարոզներից, դրանց կից՝ արտասանական թվերգով կատարվող աղոթք-

ներից, և կցուրդ կոչված հոգևոր ազատ (առաջմ կանոնացուրից դուրս մնացած), տոնական երգերից, որոնք հետագայում կանոնական հռչակվելով վերադասավորվեցին և ամփոփվեցին ձեռագիր շարակնոցների մեջ³²:

Սահակյան եղանակավոր քարոզները թվով չորսն են և վերաբերում են հնագույն Սաղմոսարան-Ժամագրքի նյութերին: Հատկապես՝ գիշերային ու (նրա շարունակությունը կազմող) առավոտյան ժամի երգեցողությունը: Դրանք ման գիշերային հրույման ժամանակ ավելացվել են ութ սաղմոսականոցներին. կրկնվելով կցվել են երկուական (քայն ոչ հաջորդակալ) կանոն-

²⁵ Մենք չենք անտեսում «Օրհնությունաբեր ցուցակ»-ի հաղորդած տեղեկությունները: Այնտեղ տարբերվում են խորհրդակատարությանց վերաբերող մույն և ասորի հայրերի շարադրած ու գրերի գյուտից հետո հայերենի թարգմանված մի շարք կանոններ: Ընդ միմ Սահակ Պարթևի մասին ասվում է. «Իսկ վասն Քահանայօրհնէից՝ սրբոյն Սահակայ է արարիալ յառաջին ամի հայրապետութեան իւրոյ. (ա՛յլ օր՝ սրբոյն Սահակայ զծեալ յետ քսան և մի ամի եպիսկոպոսութեան իւրոյ) ի Կաթողիկոսութեան. որ օրն մի էր և յիշատակ սուրբ Լաւրապետին. արար և զՔահանայօրհնէն, որ ունի եօթն անտարան. այլ և զԱշխարհաթաղն ի Քաղաքուղաշտի (ա՛յլ օր՝ յԱրարատ գաւառի ի Վաղարշապատ քաղաքի) ի վկայարանս սրբոց Հոփիսիսեանց, յետ հարիւր մետասան ամի սրբոյն Գրիգորի. զի մինչև ցայն վայր հնովն վարէին» (տես Հայկական թարգմանությունը մանկանաց, ԵՎ. հրատ., էջ 247): Բայց հայտնի է, որ ընդհանուր առմամբ հնուց եկող այդ գրությունը մինչև մեր օրերն հասնելը որոշ փոփոխությունների է ենթարկվել: Բացի այդ, փոփոխություններով են հասել մինչև մեր օրերը ման մեջբերված հատվածում հիշված կանոնները (կամ կարգերը՝ Զոհնադրութեան, Քահանայաթաղի և Աշխարհաթաղի): Այնուհետև, սույն և մնաց կանոններ,—որոնք Սահակ Պարթևի կարգադրությամբ և հսկողությամբ հայերենի թարգմանվելով, Մեսրոպ Մաշտոցի ղեկավարությամբ ամփոփվեցին «Մաշտոց» անվանված ուրույն հիտարանի մեջ,—առանձին դեպքերում հունարենից թարգմանվել են ման Հայաստանում նույնիսկ Գրիգոր Լուսավորչի ժամանակներից կամ ընդհանրապես գրերի գյուտից առաջ կիրարկված մայրաբնականներից: Այդ մասին ավանդել են պարունակում անգամ մեջբերված հատվածի վերջին խոսքերը: Արդ, Հայաստանում կիրարկված այդ մայրաբնականների հեղինակային պատկանելության հարցը տակավին չքննվել է: Իսկ որ կարևորն է՝ ման հայկական հնագույն «Մաշտոց»-ի կանոններում երգվող հատվածները ուրիշ քան չէին, քան սաղմոսներ, կանոնագրություններ, և հաղվադես՝ այլուստ հայտնի կցուրդ երգեր:

²⁵ Տես մեր հոդվածը՝ Ութ ձայնի սկսվածքները, «Էջմիածին», 1972, Բ:

²⁶ Նույն տեղում, էջ 88:

²⁷ Մովսես խորենացի, Պատմություն հայոց, ԵՎ. հրատ., էջ 358:

²⁸ Հմմտ. մեր հոդվածը՝ Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարության ավագ օրհնությունները, «Էջմիածին», 1978, Բ:

²⁹ Հ. Բ. Սարգսյան, Քննադատություն Յովհան Մանդակունույն և իր երկասիրությանց վրայ, Վենետիկ, 1885, էջ 86:

³⁰ Գ. եպիս. Սրվանձտյանց, Հնոց և նորոց (Պատմություն վասն Դարի և Մովսեսի խորենացու), Կ. Պոլիս, 1874:

³¹ Հմմտ., մեր հոդվածը՝ Давид Непобежденный и армянская музыка, «Советская Музыка», 1968 № 8.

ների³¹։ Չորս քարոզները միջնադարյան ձեռագրերում երբեմն վերագրվել են ճան Մեսրոպ Մաշտոցի³²։ Սակայն այդ մասին տակավին Հովհան Օձնեցու արձանագրած հստակ տեղեկությունը հարցը լուծում է հուշարժ Սահակ Պարթևի³³։ Քննարկվող քարոզները մեզ հասել են մեղեդիի երկու հիմնական տարբերակով³⁴, թայց միննույն Գձ դարձվածք ձայնեղանակում³⁵։ Եվ դրանց ձայնեղանակային հիմքի նախնականությունը հաստատվում է նրանով, որ Մովսես Սյունեցիին Գձ-ի մասին ասում է, թե «սովա յաւրիկեցան քարոզք տըլընջեան և ի գիշերոյ»³⁶։ Գրական բնագրի ու մեղեդիի փոխհարաբերության, ինչպես և կշռույթի ու կառուցվածքի տեսակետով այս քարոզները շատ մոտիկ են սաղմոսներից։ Երաժշտության վառ անհատականացված բնույթով, սակայն, պայծառ գույներով, բարձր տրամադրությամբ և մարդկային ջերմ շնչով՝ դրանք իսկույն տարբերվում են սաղմոսներից։ Դրանց ազդեցությունը նկատելի է հա-

³² Դրա հիման վրա է, որ քննարկվող քարոզները ձեռագրերում հաճախ Ռիշատակվում են զույգ կանոնների սկզբնաբառերի մեջբերումով, ինչպես «Քարոզ Երանելու և Իրեւն» ե այլն (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 594, էջ 28)։ Ըստ այդմ, աղավաղումներից ազատ գրչագրերում սաղմոսականոնները հիշատակվում են՝ 1—5, 2—8, 8—7 և 4—8 զուգորդումներով։

³³ Նույն տեղում։

³⁴ «Պարտ և արժան է—գրում է Օձնեցին—ի գիշերապաշտաման, զկանոնացն զհետ բերել զչորս զայս քարոզութիւն. վասն ի վերուստ խաղաղութեան, վասն ի գիշերի և ի տուրնջեան, վասն ուղղելոյ զգնացս մեր, վասն գտանելոյ մեզ շնորհ. զոր արարուալ է վասն նորին իրի սրբոյն Սահակայ հայոց կաթողիկոսի։ Եւ ըստ իւրաքանչիւրոցն զաղօթս զայսոսիկ հանգըստիւքն իւրեանց» (մեջբերում է՝ «Տէր Աստուած մշտնջենաոր», «ի գիշերի և ի տուրնջեան», «Անկեալ լեք առաջի քո» և «Օրհնեալ ես Տէր Աստուած մեր» աղոթքները, իրենց «հանգիստ» կոչված մասերով)։ Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցոյ մատենագրութիւնը, Վննետիկ, 1959, էջ 42։

³⁵ Մասնավորապես՝ հասարակ և համդիսավոր օրերի համար (երգը ձայնագրելայք ի ժամագրոց. Վաղարշապատ, 1877, էջ 175—188)։

³⁶ Մեղեդիի հիմնաձայնն է երկրորդ վերնախաղ կիսվարը (վերջում ութնյակային գեղեցիկ զարտուրությամբ դեպի առաջին վերնախաղ կիսվարը)։ Բայց դա շփոթության տևողք պետք չէ տա։ Բավական է ձայնագրությունը փոխադրել փոքր եռյակ ցած, և այդ դեպքում հիմնաձայնը կդառնա երկրորդ փուլը։

³⁷ Մովսես Սյունեցին և նրա «Յաղագս կարգաց» գովածքը, Զվ. հրատ., էջ 81։

յոց ժամագրքի մի շարք ուրիշ նյութերի վրա։ Գալով կցուրդ (հետագայում շարական կոչված) կտորներից, արդեն գիտենք, թե ինչպես Սահակ Պարթևի ստեղծագործությունները տարբեր գրչագրերում վերագրված են եղել Մեսրոպ Մաշտոցի³⁷. և կամ՝ ընդհանրապես՝ այլ երգիչների հեղինակություններ Սահակ Պարթևի³⁸ և ալը։ Վերջինիս երաժշտա-բանաստեղծական վաստակին վերաբերող հից, վստահելի աղբյուրների ընձեռած տվյալները, սակայն, հստակ են ու իրար փոխադարձաբար լրացնում և ստուգում են։ Այնպես, որ նույնիսկ առանց հատուկ դժվարության հաճել ենք համապատասխան եզրակացության, ամբողջացնելով ու ճշտելով «Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը» ուսումնասիրության մեջ ընդհանուր առմամբ նշվածը³⁹։ Ըստ այդմ, Սահակ Պարթևի գրչին են պատկանում՝ Ղազարի հարկության կանոնի երգերը, Ծաղկազարդի կանոնի երգերը (որոնցից «հարց»-ը XII—XIII դարերից հետո պարականոն է մնացել)⁴⁰, երկրորդ Ծաղկազարդի հից կանոնի երգերը (որոնցից «հարց»-ն ու «մեծացուցե»-ն XII դարից հետո պարականոն են մնացել)⁴¹ և

³⁸ Մ. արոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը, Զվ. հրատ., էջ 171։

³⁹ Ինչպես օրինակ՝ Հանգստյան շարականները։

⁴⁰ Հմմտ.՝ «հարց»-ը Երևանի համալսարանի, 1970, № 3, էջ 181։

⁴¹ Հ. Գ. Ավետիքյան, Բացատրություն Ծաղկազարդ, Վննետիկ, 1914, էջ 210։ Կանոնիս այժմյան հարցը՝ «Որ ի քրովբեական», Շնորհալույնն է։

⁴² Երկրորդ Ծաղկազարդի տոնը հանդիպել է Համբարձման հաջորդ կիրակին։ Այդ տոնին վերաբերող սահակյան երգերը յոթն ուն եղել, Դձ ձայնեղանակում. օրհնություն երկու պատկերով («Թագաւոր գուրով» և «Յորժամ եկն Յիսուս»), հարց («հարեանեալ ես», գործատոնով), մեծացուցե («Ուրախ լեր մայր յուսոյ»), ողորմեա («Ջգալուստ քո») և տեր երկնից («ի յարութեան ատուր»)։ XII դարում Գրիգորիս Գ Պառլավունի կաթողիկոսը (Շնորհալու եղբայրը) տոնիս համար նոր կանոն է հորինում՝ «Մեծամարաշ այս խորհուրդ» (իր սարքով)։ Հետագա հարյուրամյակների ընթացքում սահակյան երգերը աստիճանաբար կցվում են բուն կամ առաջին Ծաղկազարդի (այսինքն՝ «Գալստեան տառն յՊրոսպոլէմ» խորագրով հայտնի) կանոնի երգերին։ Հարցն ու մեծացուցեն ի վերջո պարականոն են մնում, իսկ մնացած չորս կտորները, որպես մի երգի պատկերներ կատարվում են բուն Ծաղկազարդի օրհնությունից առաջ, իբրև Ռետնակ շարական։ Այս ընթացքը, սակայն, այնքան դանդաղ է ճամփա հարթում, որ միջնադարյան նույնիսկ ըմտիք շարակնոցներում հանդիպում ենք հարկատական պատկերների։ Մաշտոցի անվ. Մատենադարանի

ավագ շաքաթվա բոլոր օրերի կանոնների երգերը (ի բաց առյալ Բ2, Գ2, Գ2 օրհնությունները՝ «Ամեդն ի թօրե», «Իմաստուն կուսանցն» և «Որ յաթուս փառաց», որքաթ օրվա «Այսադ ի կատարումն» ու շաքաթ օրվա «Կենդանին յախտեցից» և «Կուսածին մարմնով» շարականները)⁴⁴։ Օրհնությունների ինքնուրույն պատկերները և հարցերին կից գործատմերը առանձին-առանձին հաշվելով՝ 62 երգ⁴⁵։

Բոլորն էլ առկա են ինչպես Ջայնագրայա Ծարակնոցում⁴⁶, այնպես և, բնականաբար, գրչագիր խազավոր շարակնոցներում։ Համեմատությունը ցույց է տալիս, որ առհասարակ համապատասխանություն կա այդ երգերի գրական բնագրերի, տեսակների ու ձայնեղանակների մշտն⁴⁷ և մեղեդիների հյուսվածքի⁴⁸ առումներով՝ Ջայնագրայա և ձեռագիր շարակնոցներում։ Միշտ է, մեզ հետաքրքրող ստեղծագործությունները զրգներով համաքրիստոնեական և հայկական

մասնագիտացված երգարվեստի մնացույն շերտերին հատուկ արհեստագիտական ու գեղարվեստական մակարդակի մասին մեր գիտանքի լույսի տակ, հասկանում ենք, որ դրանց մեղեդիները ենթարկվել են ժամանակի ակտեղի ազդեցությանը։ Մասամբ՝ մինչև դրանց գրական բնագրերի խազավորումը, և մասամբ խազավոր ժողովածուների մեջ անցնելու ընթացքում։ Վերաբերվելով երկու երևելի տոների ու ավագ շաքաթվա ճշմարկալի պաշտոններությանը, քննարկվող ստեղծագործությունները արդեն սկզբից ենթակա են եղել կատարողական ճոխացման։ Դա, ինչպես և առհասարակ ժամանակի ներգործությունը⁴⁹, ի վերջո հանգեցրել են երաժշտական բաղադրիչի բարդացմանը երգաշարքի զգալի մասում⁵⁰։ Անշուշտ, պարզ հատվածներում ևս ամեն ինչ չէ, որ հնուց է գալիս։ Ուշադիր քննությունը ցույց է տալիս սակայն, որ մույնիսկ անկախ արտաքին պարզության կամ հարաբերական բարդության ցուցիչներից, սահակյան երգաշարքերում մույնպես պահանջված են, ինչպես մի քանի ընդհանուր, կարևոր, դարաշրջանային հատկանիշներով աչքի ընկնող վստահելի գծեր, այնպես և ոճական առումով նախնական ու հեղինակային անհատականության դրոշմ կրող ուրջակի կտորներ։ Մասնավոր ուշադրության արժանի կետեր են՝ այս տեսակետով՝ իրացված ձայնեղանակների միակցություն-

⁴⁴ Այս վեց երգերը մույնպես Շմորիայում են։

⁴⁵ Պարականոցներն էլ միասին առած՝ 67 կտոր։

⁴⁶ Նկատի ունենալ էջմիածնական հրատարակությունը (1875 թ., էջ 378—457)։

⁴⁷ Իհարկե, մի կողմ թողնելով վրդակի տպավորություն ստեղծող այնպիսի փաստեր, ինչպիսին է, օրինակ, Մատենադարանի № 8101 ձեռագրում ավագ երեքարթի օրվա կանոնի «Ահադր ես թագաւոր» Գձ մանկուցը անսպասելիորեն «Բկ» մշանակելը (տես էջ 6ա) և այլն։

⁴⁸ Հյուսվածքի վերաբերությամբ առավել ևս պիտի շեշտել, որ համապատասխանությունը գլխավոր գծերի մեջ է։ Որովհետև խիստ մոտեցման դեպքում հարկ է դիտել հետևյալ համագամներն ու մշանները։ Երգաշարքերում ծանր կատարվելու ենթակա կտորների խազային հյուսվածքը աչքի է ընկնում խտության տարբեր աստիճաններով։ Ծանր հարցերում գործատմերը, որպես ընդհանուր կանոն, հյուսվածքով ավելի հագեցած են լինում։ Ավագ հիմնաքարի օրվա մեծ օրհնությունը (վեց պատկերով) խազավորված է լինում այնպես, որ հյուսվածքը աստիճանաբար է խտանում։ Այս կետերը Ջայնագրայա Ծարակնոցում համախառնված են։ Վերն արդեն մեջքից մի քանի ձեռագիր շարակնոցներ։ Հմտ. մահ Մատենադարանի № 1578 գրչագիրը (էջ 102ա—127ա)։

⁴⁹ Հատկապես զարգացած ավատատիրության շրջանում, Կիլիկիայում, երբ վերանայվում էր հին երգերի երաժշտական բաղադրուցիչը (հմտ. մեր հոդվածը՝ Հանդիսավոր օրերի կանոնագրությունը, «Էջմիածին», 1971, Թ, էջ 42, ծանոթ 4)։

⁵⁰ Այստեղ ամհրաձեռն է մշել մի երկու կետ ևս, ի լրումն վերը խազավորումների հյուսվածքի կապակցությամբ արդեն ասվածին։ Նկատելիորեն ընդգծված է Բձ, Գձ և Բկ հանր երգերի նղանակների ոլորում և զարդարում բնույթը, հատկապես Ռետամուտ տարրերի օգնությամբ։ Շեշտված է ավագ շաքաթի կանոններում ծանր կտորների՝ աստիճանական ավելացումը, այդ կտորներին հատուկ երաժշտության քննակական անձան միջոցով։ Վերջապես, երգերի տվյալ շարքերում XII դարից հետո հայտնված մեղեդիներ են՝ Դազարի հարության կանոնի ստեղծի՝ «Միսուս Միածին», որ գալիս է Հովհանն Մարգարեի կանոնի ողորմյայից (Շմորիայի)։ Բուն Ծաղկազարդի Բկ ծանր ողորմյան ու տեղ երկնիցը՝ «Ուրախ լեր եկեղեցի» և «Զրիստոս թագաւորն», որոնք (երկուսն էլ) վերանայանալված են վարդապետի երկրորդ օրվա կանոնի Բկ տեղի մանկուցի աղեցության ներքո («Մոհմեցեք մանկուց» — Շմորիայի)։ և ավագ ուրաթ ու շաքաթ օրերի տեղիները՝ «Եկալք հաւատացեալք» և «Թովսէլի քեզ հաւատացեալք»։

ընդ, կշռույթի կազմակերպման սկզբունքները վաճառքային, ծորերգային և կառուցվածքային տիպի ծանր կտորներում⁵⁴, այլև խոսքի ու երաժշտության փոխկապվածության առաջնային ձևերի պահպանումը հանկարծաբանական ծանր երգերում⁵⁵:

Վաճակային երգերի մեջ հնագույն ոճի և հեղինակի անհատականության դրոշմը պահպանված լավագույն կտորներից է Ղազարի հարության ամ դարձվածք օրհնությունը՝ «Այսօր գոլով ի հեթանհա»: Ինչպես նկատել է տակավին Կ. Կոստանյանը, V դարի հայ քանաստեղծ-երաժիշտները Ծննդյան և Հարության նվիրված երգերում՝ աշխարհի բարության և վերանորոգությունը ենթադրող պատմիկների այլաբանական մտքերի տակ հասկանում էին նաև սեփական ժողովրդի ազատագրությունը օտար լծից⁵⁶: Դա ակնհայտ է նաև Սահակ Պարթևի նույնիսկ քննարկվող ստեղծագործության կրկնակում⁵⁷: Վաճակային կտորների շարքում հիանալի նմուշներ կան նաև ակ

դարձվածք և բժ, զծ ու այլ ձայնեղանակներում, նմուշներ, որոնք, ի դեպ, երբեմն շրվաման եզրեր են հանդես բերում մաշտոցյան երգերի հետ⁵⁸: Իրենց ամբողջության մեջ, սակայն, սահակյան և մաշտոցյան երգերը, ունենալով դարաշրջանային մի քանի ընդհանուր հատկանիշներ⁵⁹, միաժամանակ զգալի տարբերվում են իրարից: Վաղուց նկատված այս երևույթը անցյալում ճիշտ չի բացատրվել⁶⁰: Մենք պահքի ժամանակամիջոցը, որի համար հորինված են մաշտոցյան ապաշխարության սաղմոսատիպ երգերը, բոլորովին ուրույն տեղ ունի եկեղեցական տարվա մեջ: Միջնդեո սահակյան երգերը հորինված են երկու տոների և ավագ շաբաթի համար, ավետարանական պատումների հարապատասխան: Դրանք վերաբերում են կաթողիկոսանիստ կենտրոնի ստեղծագործական-կատարողական ավանդույթների ոլորտին: Եվ դրանցում դրսևորված է ուրիշ (քան Մաշտոցը) խառնվածքի տեր հեղինակի ներաշխարհը: Արդարև, ցերեմոնապես պոռթկում, վշտագին քնարական մաշտոցյան ապաշխարության երգերից մի ուղի է մեկնում, որ հասնում է մինչև Նարեկացին, նրա Ողբերգության Մատյանն ու մասամբ նաև տաղերը: Իսկ սահակյան հեզասահ ու մեղմամուշ, լուսավոր թախիծով առյգված

⁵⁴ Այդ միակցության մեջ հն՝ ամ—դե գրեթե բոլոր ձայնեղանակները. ած, ալ, զծ և դծ դարձվածքները և նույնիսկ ստեղծի եղանակը (աճկախ այն փաստից, որ վերջինս, տվյալ դեպքում, առավել մեծ փոփոխությունների է ենթարկվել դարերի ընթացքում: Ուշագրավ պարագաներ են նաև՝ բժ ձայնեղանակի լայն կիրարկումը, որ հասնում է եղել հոգևոր ինքնուրույն, ազատ (ոչ կանոնական-պարտադիր) երգերի հատվածին. և բժ ծանր միջնդեոներում ոչ հազվադեպ դեպի զծ և զկ ուղղված շեղումների առկայությունը, որ խոսում է համապատասխան մեղեդիների հնագույն արմատների մասին:

⁵⁵ Հատկապես՝ միջակ ու մեծ և կարճ ու մեծագույն վաճակների փոխհարաբերությունը գոճն ընդհանուր գծերի մեջ կայունացնելու միտումը:

⁵⁶ Դարձյալ՝ գլխավոր գծերով: Որովհետև համակարծառանական ծանր երգերում՝ կարճ, միջակ, մեծ ու մեծագույն վաճակների հենց անկայուն փոխհարաբերության պատճառով խոսքի ու երաժշտության ձևակառուցողական դերերը, ընդհանրապես ասած, փոխվում են հոգուտ երաժշտական քաղաղորդչի: Բաց տարբեր տեղություն վաճակների նման փոխհարաբերությունը աստիճանաբար է ճանապարհ հարթել: Այնպես, որ հնագույն հանկարծաբանական ծանր երգերում գրական քննարկի ձևակառուցողական պաշտոնը տակավին էական է և որսալի է:

⁵⁷ Կ. Կոստանյան, Հայոց քանակությունությունը պատմություն, ձեռ. (ՀԱԳԱՅԻ, Կոստանյանի դիվան, ծր. 74), էջ 38 և շարունակությունը:

⁵⁸ Այսպես օրինակ, շարականի առաջին տամ մեջ ասվում է.

«Այսօր գոլով ի հեթանհալ»

«Ի ամենադոր հրամանալող ձայնեցեր Ղազարու Եւ դուղացաւ մահ,

Դժոխք պարտեցաւ, ապականութիւն լուծաւ.


Կենդանաբար «Իստոս կեցո գմեզ»

(ընդգծումը մերն է—Ն. Թ.):

⁵⁹ Տես օրինակ, ավագ երկուշաբթիի բժ տեր երկնիցը, ավագ չորեքշաբթիի զծ ողորմյան, ավագ հինգշաբթիի ակ դարձվածք մանկունքը և այլն:

⁶⁰ Դրանք են՝ «ձևի պարզությունը, բովանդակության հստակությունը, կերպարների ինքնատիպությունը ու տրամադրության հանդիսավորությունը, որ նշում է Կոստանյանը, Ծարականի Էմիլյան թարգմանության երկրորդ հրատարակության առթիվ գրած Առաջաբանում (տես Առաքան, Երեւան, 1914, էջ 16):

⁶¹ «Սահակ հունական կրթություն ստացած լինելով,—գրում էր Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը— մի հոր հոսանք է մտցրել (իմա՝ ի հակադրություն աստուկանի), որով սկսել են մեզանում հունական ուղղության հետեւել և գուցե դրանից է, որ ս. Սահակի անվամբ մնացած շարականները իրենց կազմությամբ և ոգով տարբերվում են այն մյուս հնագույն շարականներից»: Տես նրա՝ Հայոց եկեղեցվորդություն, մասն II, Վաղարշապատ, 1908, էջ 121: Այս մոտեցումը հիմնավորապես մերժելու համար բավական է թեկուզ հիշել, որ Մաշտոցը ևս հունական կրթություն էր ստացել մանկուց. «Ի մանկության տիմ վարժեալ հիլենական դպրութեամբն» (Կորյուն, Վարք Լաշտոցի, Երևան, 1941, էջ 98):



Եմուշ: Երկրորդը՝ կերպարային ցնցող բովանդակությամբ. Հուդայի, մատնության և դավաճանության հավիտենական հիմնանյութով, որ, տվյալ դեպքում, բացահայտված է զարմանախառն ափսոսանքի արժանի տխուր մի եղելություն վերապատմելու թախծալի շեշտերով:

Զ.

Վերջապես, ման հայ մասնագիտացված երգարվեստի զարգացման խնդիրների ոլորտում եմ մեծ կաթողիկոսի այն ջանքերը ևս, որոնք կապված են ծիսական գրքերի ու կարգերի հայացման, այլև նոր կամ վերախմբագրված կանոնների հաստատման հետ: Սաղմոսարան-Ժամագրքի մասին խոսք եղավ վերը: Պատարագը հայացել է Բարսեղյան խորհրդամատույցի թարգմանությամբ⁶²: Իսկ Ծիսարանը (Օրհնություններ ցուցակում թվարկված նյութերի միակցությունը, որ Մաշտոց անվանվեց)՝ տարբեր հեղինակների շարադրած համապատասխան կանոնների կամ Գրիգոր Լուսավորչի և Ներսես Մեծի օրոք խմբագրված և ընդունված բնագրերի թարգմանությամբ⁶³: Այսպիսով, V դարանկգրում, ս.

Սահակի կարգադրությամբ, հսկողությամբ թե՛ ման նրա աշխատությամբ հայացած եղանակ՝ Սերմնօրհնեքի կանոնը (Գրիգոր Աստվածաբան), Ջրօրհնեքի կանոնը (Բարսեղ Կեսարացի), Ապաշխարող կարգելու և արձակելու կանոնը (Կյուրեղ Երուսաղեմացի), Հոգեհանգստի և Քահանայաթաղի կանոնը (Եփրեմ Ասորի), այլև Ձեռնադրության կանոնը (հնուց ընդունված բնագրի հիման վրա), Աշխարհաթաղի կարգը և այլն:

Հանձնից Սահակ Պարթևի հայ երաժշտարվեստն ունի Մաշտոցից հավասար մեծ երախտավոր:

Ի վերջո բերում ենք ոճականորեն բավարար չափով պահպանված սահակյան երգերից մեծություն, մի այլ առիթի թողնելով դրանց մասնավոր վերլուծությունը: Դրանք են (կարգով)՝ «Վասն ի վերուստ» քարոզը (մեկ տուն), Ղազարի Հարության կանոնի օրհնության առաջին տունը, ավագ հինգ-շաբթի կանոնի մանկունքը (երեք տուն), և մեկական տուն՝ ավագ երկուշաբթիի կանոնի տեղ երկնից, ավագ երեքշաբթիի կանոնի մանկունք և բուն Ծաղկազարդի կանոնի օրհնության կտորներից⁶⁴:

թերի ու սովորույթների հաշվառմամբ կատարված թարգմանությամբ:

* Համապատասխան ձայնագրությունները՝ ամսագրի հաջորդ համարում:

⁶² Հ. Հ. Գաթրճյան, Սրբազան Պատարագամատույցը Ռայոց, Վիեննա, 1887, էջ 31:

⁶³ Տվյալ դեպքում՝ բավական ազատ, հայոց բար-





Կ. Մ. ՄՈՒՐԱՆՅԱՆ

(Բանասիրական գիտությունների թեկնածու)

Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ ՃԱՌԵՐԸ

IV դ. հույն օրթոդոքս եկեղեցու ճշմարտոր մատենագիր Բարսեղ Կեսարացու տակալին V դ. հաչերենի թարգմանված հարուստ մատենագրական ժառանգությունը այսօր էլ քննելի է ամենից առաջ մարդու և մարդկային փոխհարաբերությունների շուրջ ունեցած իր քաղմարտավանդակ ու տարաբնույթ հարցերով: Այս առումով, հարկավ, անսպառ նյութ է ամբարված նրա ճառերում, որոնք, ինչ-ի՞նչ պարագաների պայմանավորումով, առ այսօր հիմնականում մնում են անտիպ և հայագիտության մեջ ամենևին չքննված:

Ս. Բարսեղ Կեսարացին քրիստոնեական մտածողության տիրական ներկայացուցիչներից մեկն է: Նա իր քաղմարտիվ ճառերում ցավի զգացումով է դատարկեցրել իր ժամանակի արատավոր քանականությունը, անում է ամեն ինչ ի սեր այն քանի, որ մարդ արարածը լինի առաքելի, վեհ, գիտակցի իր քանական արարած լինելը և չընթանա անընդունելի արահետով, չհետևի խաթարված քարքերի և աղբի քրիստոնեական քարոյականության վեհ զաղափարներով:

Ամենասարասիելից, ըստ Բարսեղ Կեսարացու, հարբեցողությունն է՝ իր քոլոր կործանարար հետեվանքներով: Կեսարացու դատողությունները ճշված խնդրում ընկալվում են որպես կարեկցանքի խոսք հավասարակշռությունը կորցրած այն անձանց հանդեպ, որոնք, ինչպես նկատում է հեղինակը, անդառնալիորեն մատնված են կորստի: Այնուամենայնիվ, նա քաջատրում է. «հարբեցություն չարությունն է մայր, առաքինությունն ընդիմակ. զարին երկչուտ ցուցանե, գողջախոհն՝ պակշտոտեալ, զարդարություն ոչ գիտե, գիմաստություն ի քաց քառնայ, քանզի զոր օրինակ՝

չոր պատերազմող է հրոյ, տոնպես անչափություն գինոյ զխորհուրդսն շիջուցանե»¹:

Ինչպես տեսնում ենք, հարբեցողությունը յմենադատելուց քացի, Կեսարացին չափավորության կարեկցողությունն է ընդգծում: Նա կամենում է ունկընդրին հասցնել չափավորության մեծագույն խորհուրդը կանոնավոր կյանքի համար: Չափի զգացում ամեն ինչում, առավել նա՝ գինու հարցում: Ըստ նրա՝ չափի զգացողության պակասի արդյունք են հարբեցողության բոլոր հետևանքները, որոնցից ամենասարսափելին՝ քարոյական այլասերվածությունը, Աստծո արարած մարդուն հասցնում է ընդհուպ ֆիզիկական խեղանդամությանը:

Բարսեղ Կեսարացու ճառերում պարզորոշ նկատվում է, որ խոսքը ժամանակի մարդկանց վայրենաց փոխհարաբերությունների մասին է, որ նա

¹ ՀԱՍՆ Միմիստրների սովետից առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարան, ձեռ. № 2548, էջ 90բ—81ա: Առ այսօր Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգության չենք մասն է միայն հրատարակված ու քննված: Հայագիտությունը առավել ևս չի անդադարեցրել Կեսարացու ճառերին՝ թե՛ ձեռագիր քննության և թե՛ հրատարակված առումով: Միմիստ Մաշտոցի անվան Մատենադարանում և այլուր եղած գրչագիր հավաքածուներում Կեսարացու ճառերի տասնյակ հին ու նոր թարգմանություն-ընդօրինակություններ կան, որոնցից քաղված քաղմարտիվ հատված-վկայակոչումներ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում սույն հաղորդմամբ:

² Նույն տեղում, էջ 82ա—բ:

տեղն է, լավագույն ձևով երևում է Բարսեղ Կեսարացու մեկ այլ՝ «Առ ընչնդես» խորագրով ճառից: Կեսարացին վրդովմունքով է խոսում նյութական աճուպառ միջոցների տիր այն մարդկանց մասին, որոնք իրենց պատերն ուն գարդարում, փոխանակ իր մեծների մերկությունը ծածկելու, որովք ձին գարդարում է-մ տմեհայն շուրով, իսկ «գեղարարն անմաթաքեալ անտես» ուն ամուսն և այլն²¹:

Ըստ Կեսարացու՝ ալկի կործանարար ու անտանգի է, երբ կին արարածն է ընչասեր: Նա գրում է. «Եթե կինն ես ընչասեր տնակից է՝ կրկնապատիկ և անտանգ, քանզի զփափկությունն է վեր թորքոք՝ և զմիշտանիքությունն լաճախեցուցանէ»²²: Կանացի պնդանքությունը սահման չունի, նրանք նույնիսկ «...քարինն քանդակեն Ռիսանցն, որք լախնապակս ողեն կենդանագրացն»²³:

Բոլոր պարագաներում, ըստ Կեսարիայի արքեպիսկոպոսի՝ հույժ դատապարտելի է չափի զգացում չունենալը, սահման չճանաչելը, ազատությունը պաշտոնը: Բնության ամեն մի առարկա, իր, երևույթ ինչ որ տեղ իրենց սահմանն ունեն: «Ծով գիտե՞ զսահմանն իր, — գրում է Կեսարացին, — գիշեր ոչ տեցա-ն, զսահմանադրությունն զսկզբանէս, իսկ ազահն ոչ լուստկառէ ի ժամանակէ, ոչ ճանաչէ զսահմանս, ոչ խուլացուցանէ կարգ ի փոփոխման, այլ նմանէ որոյ բնության՝ զամենայն ըմբռնէ, զամենայն ճարակի»²⁴: Լեյնակս, ինչպես փոքրիկ գետը ճանապարհին իրեն է խտնում բյուրավոր առվակներ ու ձկնորսներ, բացառում է նա, նույն նմանությամբ էլ ճակատակն նյութական անճշմ կարողություն ունեցող անձինք կամաց-կամաց ճախարում են և, այլուց զրկելով, հարստանում: Իսկ լոթ մեկը ինչքի տնօրեն է դառնում՝ նրա մամար այլևս փոխվում և նոր երանգ են ստանում բնության ամեն մի երևույթ, մարդկային փոխադարձություններն ու հարազատն անգամ:

Շրջապատի մարդկանց միջավայրում նկատելով ընչասիրության անուսման տարածումն ու կործանարար հետևանքները, Կեսարացին, այլ ոչ չգտնելով, դիմում է. «Մինչ յերբ ոսկի անճանց խեղդ, մահու կարթ, մեղաց պատրանք. մինչև յերբ ընչեղությունն ուշադրազմի պատճառ, յաղազս որոյ գործի զեն, վասն որոյ սրի սուր. յաղազս նորա սոգակիքն անճանաթանգն ի բնութենէն, և որքար հակառակ միմեանց սպանումն տեսանեն»²⁵: Սա յուրահատուկ հարցադրում է, որ, առանց պատասխան ակնկալելու, հարցումով է քաջահայտում իրականությունը, հետևյալն ընդով մխտում պատճառը:

Բարսեղ Կեսարացու ճաներում միշտ էլ առկա է Ուղիների խրատական-դաստիարակչական որոշակի նպատակադրումը՝ քրիստոնեական քարայրականության լույսի ներքո՝ վատը անգոսնկելու և քարին ուսու-

ցանկելու եզակի ձևաքրքրությունը: Կեսարացու ճառերի ուսուցողական-դաստիարակչական նպատակը մայր շրջաններում առանց ենթադրանքի է ընկալվել դեռևս միջնադարում: Մի գրչագրում առկա է հետևյալ պատկերավոր համեմատությունը. այնպես, ինչպես մուրազորն է ջանում ժամանակին քաղհանել արտը, որպեսզի փութ չտարածվի ու չապակեմի հասկը կամ բծիչն է վիրահատում հիվանդ օրգանը ի սեր մաշմնի ապաքինման, Բարսեղ Կեսարացին էլ «...տեսնալ զքաղաքացիսն վաշխ և ի տոկախս ախտացեալ՝ խօսի առ մոսա, զի դադարեցուցէ յախտն և սկիզբն առնէ ի մարգարեական քանիցն և ցուցանէ ի գործ զախտս այս չարութիւն, խրատն և զկարօտեալն ոչ առնուլ վաշխովք»²⁶:

Իր մեկ այլ՝ «Գհարկացողաց» խորագրով ճառում նույն դաստիարակչական նպատակադրումը Կեսարացին առաջ է տանում Ռոգեթանական հույժով:

Բարկությունը ատորյա երևույթ է և միշտ էլ մատուլ է ևղև մարդկային խառնվածքին: Բայց խորամուխ լինելով նրա վերջնական ընթացքին, ի հայտ կգան վերջինիս կործանարար բոլոր մարապրությունները: Կյանքում բարկությունն առաջացնող պատճառներ միշտ էլ կան, այն կարող է ճնշել ամենամեծան առիթից և ունենալ ողբերգական հետևանք, ըսանզի բարկությունն յարուցանէ լքեմաման և լքեմամանք ճնանին զկոխ, իսկ կոխն զմարուման և մարումանք զվերս, իսկ ի վիրացն քազում անգամ մաքը»²⁷: Դատապարտելից այն է, որ բանական արարածը չի կարողանում տիրապետել սեփական կրքերը և վերանալ բարկությունն առաջացնող բազմաթիվ մանրուքներից: Մինչդեռ, Բարսեղ Կեսարացու համոզմամբ, բարկության ցավալի հետևանքները արդյունք են «ողջախոհության օրինակ» չունենալու կամ, թերևս, պակասի:

Բարկության խեղդին ոչնչով չի գիշում նախանձի, չարականության երևույթը, որի հույժ հետևանքները մերկացնող հատուկ ճառ ունի Կեսարացին («ԶՄախանաց»): Բացառապես մախանքի, նախանձի պատճառով պատերազմներ են լինում, մարդը Աստծո արարած մարդուն է սպանում, մտերիները, մարդատենները միմյանց դեմ են ելնում և հաճախ որդևպան դառնում: Ահա թե ինչու, ըստ Բարսեղ Կեսարացու, նախանձ կոչված հիվանդությունը մահաբեր է, «ապակամությունն կենաց, ժանդախտ ընդունանց, լքեմամի յԱստուծոյ տուելոցն մեզ, ընդդիմակ առ Աստուած»²⁸: Կեսարացին քավարարվելով նախանձի կործանարար հետևանքների յվարկոս-դատնիտումով, նկարագրում է չարակն մարդու արտաքինը, դիմագծերը, դեմքի արտահայտությունը՝ տարբերակիչ գծերը. «աչք այնպիսեացն ցամաք և անպայծառ, այտը տխուրք, յոնք ի վայր անկնայք, ողիւն ախտին ամբոխեալ, զճշմարտության ատևան ի վերա իրացն ոչ ունելով, ոչ գործուցելս ըստ առա-

²¹ Ձև. № 5595, էջ 267բ:

²² Նույն տեղում, էջ 267բ—268ա:

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում, էջ 260 բ:

²⁵ Նույն տեղում, էջ 271ա:

²⁶ Ձև. № 487, էջ 325բ:

²⁷ Ձև. № 2548, էջ 127բ—130ա, 160ա. Ձև. № 5505, էջ 278ա—282ա:

²⁸ Նույն տեղում, էջ 135ա:

քննութեան զգուշիւնն ի նոսա, ոչ քանի՜ զօրութիւնն պարկեշտութեամբ արդարեալ և շնորհիւ, ոչ այլ ինչ ի նախանձեղեացն և շուրջ տեսանելեաց ոչինչ»²⁰։

Բարսեղ Կեսարացիին երբեմն, թվում է, գտնէ ինքն-նահանգստացման նպատակով փորձում է արդարացման եզր գտնել նախանձատկության ատամնին դեպքերի թափար։ Ասկայն խորհրդածուծն իսկ նույն վայրկյանին անհրաժեշտ է դառնում, երբ կրկին ակա-նատես է լինում չարությամբ ու չարամանկ չկամու-թյամբ բարին անգոտանելու և վատը արագորձելու քաղաքի վատերի, երբ արհամարհվում է առա-քանչիւթյունը, քաջութիւնը, հաճութիւնը, իմաստութիւնը՝ խառնակութիւնը՝ անցավորութիւն, իմաստութիւնը՝ չարամանկութիւն և այլն։ Նա գրում է. «...զգովե-լին ի քաց արհամարհեն և ի դրացոյն չարեաց զա-նաքննութիւն արհամարհեն և հայհոյեն, քանզի յան-դուզն առնեն զարին և անցա՛ր զողջախոհն, զարդարն՝ սպառնում, չարամանկ՝ գիմատունն և զմեծավայե-լուչն իբրև զամբարհաւառն քամբառեն և զազատն՝ որպէս զարքիւն...»²⁰։

Ըստ Կեսարացու՝ առավել վրդովեցնողն այն է, որ մարդիկ չարութիւնը, ցնցոյթիւնը թաքցնում են կնդձ բարեկամության, սրտացավության դիմակի տակ, և մարդ հաճախ դժվարանում է ժամանակին ու անվճառ զգուշանալ չարին, չընկնել կարծեցյալ սիրտ վնասակար ազդեցության մեջ։ «...Մարդիկ լի-հեն,—գրում է նա,—լորժամ գատելութիւն ի խորոց ունելով սէր ցուցանիցեն, օծանեն զվերերևութիւնն ըստ ի ներքոյ ծովու վիմաց, որք սուղ ինչ ջրով ճանկեալք են. չար ոչ նախատեսեալ ամզգուշիցն լինեն»²¹։

Բարսեղ Կեսարացուց մեզ են հասել նաև այնպի-սի ճառեր, որոնցում քննվում են ժամանակի եկեղե-ցու, դավանական և առնչակցութիւնների, հոգևոր պարտականութիւնների հետ կապված և մասն թազ-մաթիվ տարաբնույթ խնդիրներ։

«Թաղազս սուրբ Երրորդութեան» ճառում ճշմարիտ հավատի արմատավորման նպատակով հեղինակը քաջում է իսկական աստվածաբանության զաղտնի-քը, մարմնական զգայութիւնից ազատվելու, երկրա-յին հրապույցներից անհաղորդ մնալու հնարավոր եղանակները։ Նա գրում է. «Իսկ դու եթէ կամիս յաղազս Աստուծոյ ասել ինչ կամ լսել, թող զմար-մինդ քո, թող զմարմնական զգայութիւնս, լքենս գերկիր, լքենս գծով, ի ստորև քան զքեզ արասցես զաղտ, զանց արա գծամուց և գծամանակաց բարե-կարգութեան, որ յերկրի զարդք...»²²։

Հոգևոր պարտականութիւնների առթերի կատար-ման, մարդկային փոխհարաբերութիւնների դրվագ-ման նույն խնդրաձգ-խորհուրդն է առկա նաև նրա «Աստուծոյ կրօնաւորականք» խորագիրը կրող ճա-

ռում։ Կեսարացիին խստագոյնն դժգոհում է, եյր նկատում է, որ, այնուամենայնիւ, կան մարդիկ, ո-րոնք աստվածասիրության խորհուրդն ունենցելով հանդերձ՝ ընթանում են զարտուղի ճամապարհով և «...որք ոչն առնեն ըստ պատուիրանացն Աստուծոյ զգործա»²³։

Կեսարացու այդգրիմակ յուրաքանչյուր մահը յու-րահատուկ ծրագիր-ուղեցոյց է՝ սկսած ճգնաժողովի կենցաղ-վարութեանցիւնից մինչև հոգևոր յիարմեք պատրաստութիւնը։ Աշխարհականին քնորոշ տարրե-րից առաջինը պետք է լքել, ըստ Կեսարացու, «չարե-նացն ախտս զպէսպէսս և զանագանս, որով պղծի հոգին...»²⁴։ Այնուհետև պետք է առ ոչինչ համարել ինչքը և լինել «...զմի սիրտ... կամս մի և զմի քաղ-ծանս...»²⁵։

Աղցիալական տարբեր խավերի անձանց միանման հոգևոր պարտականութիւնների զմահատման իմաս-տով կարևոր է Կեսարացու «Ի պահսն քառասնե-րորդ» ճառը, որը, հավանաբար, պետք է գրված լի-նի եկեղեցու դռն վարած Վաղես կայսեր անյուր հա-լածանքների այն տարիներին, երբ քրիստոնեական եկեղեցու ամեն մի տպասավոր խաղաղութիւն էր որոնում իր սահմաններում։ Կեսարացիին այսպես է քննադատում իր հիմնական ունկիւնը. «Եւ այժմ ինձ գժրիստոսի զաւրականս առ ի լըղղէմ աներևոյթ թշուալեանցն պատերազմ կարգելով և զըմպիս քա-րեպաշտութեան յարդարութեան պսակն ի ձեռն ժուժ-կալութեան պատրաստեալ Ռարկասոր է քան միսի-թարութեան»²⁶։

Հոգու ամաղադրութեան, պարզութեան և այլնի յուրահատուկ գովք է հեղինակի «Հայեա ի քեզ» յսոհա-խրատական ճառը, որտեղ արծարծված հար-ցելիլ առանձին-առանձին վերցրած խրատներ են հաճախակի կրկնվող «Թաղեա ի քեզ» ճշմանքաւով։ Նմանօրինակ հետաքրքրութիւններ կայացնող հարցեր են քննված Կեսարացու «Ի սկզբանէ էր Բանն», «Ի ճնունդ Փրկչին», «Թաղազս զոմութեան», «Խաղաք-յորդորականք ի մկրտութիւն» և այլ ճա-ռերում։

Աստուծո քննության բարի կամ չար լինելու խնդիրը, թերեւ, ամենից շատ է քննվել քրիստոնեության տա-րածման շրջանում։ Բարսեղ Կեսարացին իր «Թէ չէ պատճառ Աստուած չարեաց» ճառով անդրադարձել է նշված հարցին և հիմնավոր քննադատության են-թարկել հետևյալ երկու մոտեցումները. «մին՝ ոչ է Աստուած ամենին առելով և միւսն՝ ոչ է բարի զեա սահմանէ, քանզի եթէ չարեացն իցէ պատճառ՝ ոչ բարի յայտ է ահա...»²⁷։ Կեսարացին էլ թվարկում է կյանքում գոյություն ունեցող բազմաթիվ երևույթներ (օրինակ՝ պակշտութիւն, երկչոտութիւն, մախանք, սպանութիւն, խորամանկութիւն, այլախոհութիւն, ապականվածութիւն և այլն), որոնց չար քնորոշումն

²⁰ Նույն տեղում, էջ 187բ։

²¹ Նույն տեղում, էջ 187բ—188ա։

²² Նույն տեղում, էջ 188բ։

²³ Կնիք հաւաստիլ ընդհանուր սուրբ Լկեղեցուց, նրաւորականութիւն կարապետ Լկիսկուպոսի, Լչմիա-ծին, 1914, էջ 78։

²⁴ Ձև. № 5585, էջ 114բ։

²⁵ Ձև. № 55, էջ 108ա։

²⁶ Նույն տեղում, էջ 108բ։

²⁷ Ձև. № 5585, էջ 298ա։

²⁸ Ձև. № 2548, էջ 248բ։

է պատշաճում այնքանով, որքանով դրանք խնայ-
թյութում են առօրյա կյանքը և մշտապես ուղեկցում
շատ մարդկանց: Բայց ո՞րն է չարիքի րոն պատ-
ճառը՝ Աստված, թե՞ նույն ինքը՝ մարդը: Նման մար-
ցադրմանը Կոստանցին պատասխանում է. «Չարիքն
ոչ զԱստուած ունի պատճառ, այլ զմեզ ինքնանս,
քանզի սկիզբն և արմատ մեղաց ի մեզ ինքնիշխա-
նութիւնս է»³⁸:


Նույն մտտեցմամբ պետք է բացատրել ու պատ-
ճառաբանել մարդկանց փոխհարաբերության մեջ
առկա դատապարտւելին, և նույն մարդկանց շրջան-
ներում է այն արմատը, որ կարող է պատճառ լինել
նոր չարիքի: Ուստի և բացառվում է վերջինիս ինք-
նուրույն զուլուրյան պնդումը. «...չարն ոչ յիւրմէ զու-

րութեան, այլ յոգիս կուրացելոցն յինի»,—գրում է
Նոնաթացիները³⁹:

Այսպիսով՝ բյուզանդական եկեղեցու ճշմարտո-
ւորութեան համար Բարսեղ Կոստանցու ճանրում Ավետա-
րանի ուսմունքի հիման վրա բազմաթիվ ուշագրավ
տեղեկություններ կան իՎ դ. գործող սոցիալ-տնե-
տնական իրավանորմերի, մարդկային փոխհարաբե-
րությունների, կենցաղի, բարքերի, բարոյական ցմ-
բլունմունքի, առկա մասկացությունների և այլնի մա-
սին, որոնք այսօր ընենքի են ոչ միայն մամանակի
նկարագրի ամբողջացման պատճառով, այլ նաև ի-
րանց ուսանելիությունն անվերապա՝ նպատակադը-
մամբ, նաև մեր օրերին:

³⁸ Նույն տեղում, էջ 249ա:

³⁹ Նույն տեղում, էջ 253ա:





ԱՐՄԵՆ ՄԱՅՐ. ՎԱՐՈՂԱՊԵՏ ԲԵՐԲԵՐՅԱՆ

(Փիլիսոփայության դոկտոր)

ՀԱՅ ԱՆԳԼԻԿԱՆՆԵՐԸ ԺԺ ԴԱՐԻ 2-ՐԴ ԿԵՍԻՆ*

Ա. մաս

19-րդ դարի սկզբներից բողոքական միապետական շարժումները ընդարձակվում են և հասնում մինչև Օսմանյան կայսրության սահմանները: Ամբողջ Միջին Արևելքում, ընդհուպ մինչև եվրոպական և ասիական Թուրքիա և մուսուլման մինչև Կովկաս, հաստատվում են բազմաթիվ միսիոներական կենտրոններ:

Բրիտանացի միսիոներները գործոն մասնակցություն են ունենում այս շարժման մեջ: Օսմանյան կայսրությունը մի մոր թերի դաշտ է հանդիսանում նրանց գործունեության համար:

* «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանը ենք ներկայացնում Մայր Աթոռի միաբան տ. Արսեն ծ. վարդապետ Բերքեյումի 1972 թվի փիլիսոփայության դոկտորի աստիճան ստանալու համար Հունդուհի համալսարանի Կինգս Կոլեջին ներկայացրած «Անգլիկան եկեղեցու և հայերի միջև հարաբերությունները 1841—1905 թվականներին» անգլերեն լեզվով գրած ավարտաճառի ամփոփումը թարգմանաբար:

Տ. Արսեն ծ. վարդապետը 1872 թ. սօստոնսին Լոնդոնում պաշտպանեց իր ավարտաճառը և 1879 թ. մարտին Ռանդիսալի իրադրության մեջ ստացավ փիլիսոփայության դոկտորի դիտական աստիճան:

Միսիոներական զանազան ընկերություններից և կազմակերպություններից բացի, անգլիկան եկեղեցին ունենում է իր եպիսկոպոսարանը Երուսաղեմում, որը մոր էջ է բաց անում ինչպես անգլիկան, այնպես էլ հայ եկեղեցու պատմության մեջ, քանի որ դրանով է սկսվում երկու եկեղեցիների հարաբերությունների պատմությունը: Պրոսիայի Ֆրեդերիկ Ուիլյամ 4-րդ թագավորը առաջին անձն է լինում, որ Անգլիո եկեղեցու ղեկավարներին առաջարկում է հաւտատել անգլիկան մի եպիսկոպոսարան Երուսաղեմում: Թագավորի կենսագիրները վկայում են, որ նա դեռ երիտասարդական տարիներից փայփայում էր այն գաղափարը, որ բողոքականները սուրբ երկրում պետք է ունենան պատշաճ տեղ և աղք եպիսկոպոսարանի միջոցով պետք է ստեղծեն, ի թիվս արևելյան եկեղեցիների, բողոքական գործունեությանը կենտրոն, որը բողոքականների համար պետք է ունենա օրինական ճանաչում և հավասար իրավունքներ կայսրության մեջ: Նա իր մտքում ուներ մի այլ ծրագիր էա. ուզում էր մի ապահով կենտրոն ունենալ հրեության մեջ՝ միսիոներական գործունեություն ծավալելու համար:

Անգլիկան եկեղեցին և Բրիտանական կառավարությունը այս առաջարկի մեջ շահեր տեսնելով, իրենց համաձայնությունն են տալիս՝ հաստատելու եպիսկոպոսարանը: Անգլիկան եկեղեցին մտածում է, որ եթե մի կենտրոն ունենա Պաղեստինում, ապա կկարողանա մեշտությամբ միանալ հրեա քրիստոնյա սակավաթիվ համայնքների հետ՝ պահելով սակայն իր ճշմարիտ անգլիկան կառուցվածքը: Այսպիսով, անշատ քրիստոնեական համայնքների միաձուլումը պիտի ապահովեր անգլիկանների համար մի ցախապատվություն և ցրանք ձեռք պիտի բերեին ս. Հակոբի այտուղ և պիտի նկատվեին առաքյալի հաջորդները:

Այս հավակնությունները դեռևս ժամանակին ծաղրանքի նյութ են դառնում բողոքական միսիոներների կողմից և ցրանքից մեկը հեզանքով գրում էր, որ առաքյալների հաջորդողներից մեկը, օրինակ՝ Քենտրբերիի արքեպիսկոպոսը, մի օր պետք է գրի մի նոր թուղթ՝ ուղղված հրեաներին:

Եպիսկոպոսարանի համար, սկզբնական ջրջանում, իրար հաջորդող եպիսկոպոսներ են ձեռնադրվում, որոնցից առաջինը՝ Ալեքսանդր Եպիսկոպոսը (ձեռնադրված 1841-ին և մահացած 1845-ին), ցախապես եղել է հրեա ռաբբի, հետագայում դարձել է դեպի քրիստոնեությունը, սակայն իր խառնվածքով մնացել հրեաներից ավելի հրեա: Երկրորդը՝ Կոպատ Եպիսկոպոսը (որը ձեռնադրվել է 1846-ին և մահացել 1879-ին), Պրուսիո թագավորի թեկնածու է եղել: Սա ծագումով ոչ գերմանացի և ոչ էլ անգլիացի է եղել, այլ՝ շվեյցարացի: Երրորդը՝ Պարքլեյ Եպիսկոպոսը (որը ձեռնադրվել է 1879-ին և մահացել 1881-ին), անգլիացի էր:

Մյուս կողմից՝ Բրիտանական կառավարությունը այս ձեռնարկած քայլի մեջ տեսնում էր իր այնքան ցանկալի ծրագրի իրագործումը: Նրա նպատակն էր Օսմանյան կայսրության մեջ ունենալ մի կարևոր կղզի: Արքայական մի նամակով Ալեքսանդր Եպիսկոպոսի մեկնումը Պաղեստին ինքնին ապացույց էր այն բանի, որ այնտեղ մուտք էր գործում մի քաղաքական գործիչ:

Նոր եպիսկոպոսարանը ուներ երկու հիմնական նպատակ՝ Օսմանյան կայսրության մեջ առավել ամրապնդել անգլիկան եկեղեցու և Բրիտանական կայսրության քաղաքական շահերը:

Լատիները և հույները Ալեքսանդր Եպիսկոպոսի մուտքը Երուսաղեմ դիտում էին որպես Բրիտանական կառավարության կողմից ձեռնարկված մի շարժում՝ ստեղծելու մի «Անգլիական կոսակցություն»

սուրբ երկրում: Սակայն Ալեքսանդրի գործունեությունը իր հաջորդի՝ Կոպատ Եպիսկոպոսի հետ համեմատած Երուսաղեմում մնում է անճշման:



Կոպատ Եպիսկոպոսը, լինելով ֆրանսախոս շվեյցարացի, գիտակ է եղել նաև անգլերենին, գերմաներենին և արաբերենին: Նա պատկանելիս է եղել Շվեյցարիայի Բաբելվուդյալ եկեղեցուն և իբրև միսիոներ, Լոնդոնից ուղարկվել է Եթովպիա, Լիբանան, Պաղեստին, Մալթա, Եգիպտոս: Նա մի սարկավագ է եղել, երբ հրավեր է առաջել ձեռնադրվելու Եպիսկոպոս Երուսաղեմի համար՝ Լոնդոնի Եպիսկոպոսի ձեռամբ:

Կոպատի հակառակորդները Էկվեթոր Եպիսկոպոսի գլխավորությամբ, բողոքում են Քենտրբերիի արքեպիսկոպոսին՝ Եթովպիայում նրա ունեցած ելույթների համար, նրան մեղադրում հերետիկոսության մեջ, ինչպես նաև նրա նկարագրի համար: Բայց Կոպատը ճարակությամբ կարողանում է արդարացնել իրեն: Ձեռնադրության օրը, սակայն, հակառակորդները մի փաստաբանի միջոցով պատրաստում են իրենց մեղադրանքները, որպեսզի դրանք ընկերակն

ձեռնադրության պահին: Բայց կանխելու համար նման մի անախորժություն՝ ձեռնադրությունը հետագայում է և տեղի է ունենում մի քանի օր հետո մի առանձին մատուցում:

1848 թ. Կոպատը հասնում է Երուսաղեմ: Նա այցելում է հունաց և հայ պատրիարքներին, սակայն անտեսում է լատիններին: Նրա առաջին գործն է լինում ստեղծել անգլիկան բողոքականների մի խումբ: Մահմեդականների մեջ՝ ավետարանելը նրա ծրագրից դուրս էր: Այդ նպատակով նա հավաքում է ամեն տեսակի անձանց՝ Ավետարանը ընթերցելու համար: Այս ձևով հիմք է դնում մի դպրոցի, ուր հավաքվում են տարբեր ազգություններից որբեր: Հույները բողոքում են իշխանություններից՝ այդ դպրոցի ստեղծման դեմ, Կոպատին սպառնում, որ հետո մնա տեղի քրիստոնյաներին դավանափոխ անելու փորձից, քայքայվելու հայտարարում է, որ ով իրեն կդիմի դավանափոխ լինելու համար, ինքը ստիպված է ընդունել նրանց: 10 տարի հետո Օսմանյան կայսրության կողմից հռչակված օրենքը, որով քաղաքացիական հավասար իրավունքներ էին տրվում քրիստոնյաներին, ուստի ազատ գործունեության լայն հնարավորություն էր տրվում նաև Կոպատին: Ի վերջո Կոպատին հաջողվում է ընդարձակել իր գործունեության դաշտը՝ հիմնելով այլ դպրոցներ և ավելի զորացնելով եպիսկոպոսարանը, ունենալ երիտասարդ ավետարանիչներ, որոնք պատրաստվում էին նրա հսկողության ներքո: Սակայն զարմանալիս այն է, որ Կոպատի առաջին համոզված ավետարանիչները լինում են ոչ թե անգլիացիները, այլ հայերը, այդ թվում Տիարույեքիթի մի երատասարդ քարոզիչ՝ Կարապետ Ստեփանյան անունով:

Կարապետ Ստեփանյանը բողոքական համայնքի կողմից ուղարկվում է Երուսաղեմ, որպեսզի Կոպատ եպիսկոպոսից խնդրի իրենց համայնքի համար մի քարոզիչ: Կ. Ստեփանյանը ինքն է լինում այդ քարոզիչը, սակայն թե ինչպե՞ս, այդ այնքան էլ պարզ չէ: Երուսաղեմում նա 9 տարի Կոպատի դպրոցում մնալով՝ ձեռնադրվում է հովիվ և իշխանություն է ստանում քարոզելու Ավետարանը ամբողջ Օսմանյան կայսրության մեջ: Կ. Ստեփանյանը, համաձայն իր մասնակի, վերադառնալով Տիարույեքիթ, մկրտում է շուրջ 800 երեխաների՝ անգլիկան ծեսի համաձայն, որը և իբրև շուշակելի ապացույց, օգտագործում է հետագայում՝ իրավունք տալով ինքն իրեն խոսելու ինչ-որ անգլիկան հայ համայնքի գոյության մասին:

Կոպատ եպիսկոպոսի երկրորդ առաք-

յալը լինում է հայ եկեղեցու արքեպիսկոպոսներից մեկը՝ Մկրտիչ Ծաֆիցյանը՝ Այնթապի 12 տարվա առաջնորդը, Սսի կաթողիկոսարանի միաբան, իսկ երրորդը՝ Ավետիս Կարաուշյանը, որն իր կրթությունն ստանում է Քեմքիջում: Այս բոլորից հետո Կոպատ եպիսկոպոսը ժամանակը հատած է համարում՝ սկսելու համար իր քարոզչությունը հայերի մեջ, քանի որ արդեն ուներ երեք մոլեռանդ օգնականներ, որոնք սլաւոնաւս էին նվիրվելու անգլիկան եկեղեցու քարոզչությանը հայ համայնքների մեջ:

Նախքան այս քարոզիչների կատարած գործունեությանն ճկարագրությանն անցնելը, երկու խոսքով ասենք, թե ինչու Տիարույեքիթի բողոքական հայերը իրենց համայնքին հովիվ ապահովելու համար դիմեցին անգլիկան եկեղեցու եպիսկոպոսին և ոչ թե ամերիկյան միսիոներներին, որոնք արդեն կես դար շարունակ տարածում էին բողոքականությունը հայերի մեջ, դրամի և նպաստի ուժով:

Հակառակ այն իրողության, որ բողոքական համայնքները համեմատաբար ավելի արտոնություններ ունեին որոշ գավառներում, քան մյուս քրիստոնյաները, այնուամենայնիվ 1860-ական թվականներին արդեն սկսվել էին դժգոհություններ ամերիկյան միսիոներական միավորների նկատմամբ: Այդ մասին կան գրավոր բազմաթիվ վկայություններ, սակայն մենք միայն մեկին դիմելով կենդանացնենք ստորև ժամանակի իրական կացությունը:

Ջմյուռնիայի հայ ավետարանական համայնքի հովիվը, ոմն Ինքնատիոսյան, Քենտրբերիի արքեպիսկոպոսին ուղղված իր նամակում դժգոհություն է հայտնում ամերիկացի միսիոներների նկատմամբ: Այդ դժգոհությունը նա ներկայացնում է ոչ թե որպես անձնական դժգոհություն, այլ որպես իրական արտահայտություն իր համայնքի տրամադրությունների: Դժգոհության պատճառը իբրև թե արևմտյան ծիսակատարություններն էին, որոնք խորթ և անհարսգատ էին հայերի համար: Իգնատիոսյանը համեմատության մեջ դնելով այդ ծիսակատարությունը հայոց մայր եկեղեցու ծիսական հարուստ կարգի հետ, գտնում է, որ միայն անգլիկան եկեղեցին կարող է լիովին գոհացում տալ իրենց պահանջներից, քանի որ նա էլ ուներ ծիսական այն կարգը, ինչ որ կար հայ եկեղեցում:

Եթե դիմենք Լևոն Արփիին, կտեսնենք, որ նա էլ հայ բողոքականների պատմության մասին իր գրած գրքում շեշտում է հայերի դժգոհությունը ամերիկացի միսիոներների կողմից ներմուծված ծիսական և այլ կարգի սովորությունների նկատմամբ,

վում օժանդակելու Մկրտիչ արքեպիսկոպոսի առաքելությանը։ Այդ շարժմանը նպաստող մի դրամագլուխ է հատկացվում։ Սույն հանդիպման նկարագրությունը հրատարակվում է նույն թվի փետրվարի 27-ին Լոնդոնի «Թը Թայմս» թերթում, ի գիտություն հասարակության։ Թերթում Մկրտիչ թյուն հասարակության առաքելության հետ արքեպիսկոպոսի առաքելության հետ կապված հարցը յուրահատուկ ձևով է ներկայացված, շոշափված են հայ ժողովրդի՝ կայացված, շոշափված են հայ ժողովրդի՝ և տվյալ ժամանակի մտահոգությունները և տվյալ հարակից հարցեր, որոնք այսուհետ պատմագրանքների համար խիստ շահեկան են անգլիական եկեղեցու ղեկավարների՝ արքեպիսկոպոսի մտայնությունում ըմբռնելու տեսակետից։ Դժբախտաբար այս սեղմ էջերի մեջ դժվար է մանրամասնորեն անդրադառնալ այդ բոլոր հարցերին։

Հանդիպման վերջում բանաձևում են Մկրտիչ արքեպիսկոպոսի կողմից անգլիկաններին ուղղված մի կոչ և մի հայտարարություն, այն բարեկարգության մասին, որ կատարվում է Փոքր Ասիայի հայոց եկեղեցիներում։ Մկրտիչը որոշ գումար ապահոված վերադառնում է Այնթապ։

Մկրտիչի մեկնումից հետո հայ-անգլիկան եկեղեցու հիմնադրամի հանձնախումբի մի ներկայացուցիչը՝ կանոնիկոս Թրիսթրամը, որ պաշտոնավարում էր Տարսիս ուսումնարաններից մեկում, 1881 թվականին մեկնում է Թուրքիայի այն գավառները, որտեղ սկսվել էին անգլիկան եկեղեցու հարելու շարժումները։

Մկրտիչ արքեպիսկոպոսի գործունեության մասին ամրոդջական տեղեկություններ ձեռք բերելու և այդ կապակցությամբ օտար անվանատեսի վկայություններն ունենալու համար դիմել ենք կանոնիկոս Թրիսթրամի պատրաստած տեղեկագրին, ուր նա չափազանցված գույներով է ներկայացնում անգլիկան եկեղեցու ունեցած հաջողությունները հայերին դավանափոխ անելու գործում։ Ըստ նրա տեղեկագրի, բազմաթիվ գավառներում՝ Բիթլիսում, Խարբերդում, Սեբաստիայում, Քեսաբում, Ադիամանում, Ուրֆայում, Դիարբեքիրում և այլուր, բոլոր թողոքական համայնքները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում դեպի անգլիկան եկեղեցու ադոթագիտքը և խնդրում Թրիսթրամին, որ իրենց համար ապահովի հովիվներ, որպեսզի սովորեցնեն իրենց անգլիկան եկեղեցու դավանանքը և հավատքը։

Տեղեկագրի վերջում Թրիսթրամը Քենտրբերիի արքեպիսկոպոսին առաջարկում է, որ Մկրտիչ արքեպիսկոպոսին նկատեն իրեն ղեկավարը այդ շարժման և մի քանի հովիվներ ուղարկվեն Անգլիայից Թուրքիա,

որպեսզի շուտով բոլոր բուլղարականները դառնան անգլիկաններ։

Կանոնիկոս Թրիսթրամի այսը Թուրքիա և նրա գործունեությունն այնտեղ անտարբերությամբ չի դիտվում աներիկացի միսիոներների կողմից։ Թուրքացիությունների միջոցով սուր վեճեր են գնում Քենտրբերիի արքեպիսկոպոսի և աներիկացի միսիոներների միջև։ Վերջիններս խնդրում են, որ անգլիկանները չհամագործակեն իրենց միսիոներական գործունեությունը Թուրքիայում։ Այդ մասին մեր ձեռքի տակ ունենք քաղականին հետաքրքրական փաստեր, որոնց վրա սակայն չենք ուզում շատ ծանրանալ տեղի սղության պատճառով։

Այսպիսով, առաջին հայացքից թվում է, թե Մկրտիչ արքեպիսկոպոսի եկեղեցին և նրա հովանավորած համայնքները ծաղկուն վիճակում էին գտնվում, գեթ այդպես էին ներկայացնում Մկրտիչին ինքը և Անգլիայում նստող հիմնադրամի ներկայացուցիչներն իրենց տեղեկագրերում։ Սակայն իրականությունը բոլորովին այլ էր և նրանք ինքնախաբեության մեջ էին։

1882—1886-ի ժամանակաշրջանում մասնավոր ճիգեր են գործադրվում Մկրտիչ արքեպիսկոպոսին փրկելու համար կործանումից։ Դիարբեքիրից Քենտրբերիի արքեպիսկոպոսին ուղղված բազմաթիվ համախոսական գրություններ ու դիմումներ սկսում են անպատասխան մնալ, քանի որ 1882 թվականին Թեյթ արքեպիսկոպոսը, որ մասամբ հովանավորն էր այս շարժման՝ վախճանվում է։ Կանոնիկոս Թրիսթրամի խոստումներից ոգևորված՝ Մկրտիչ արքեպիսկոպոսը Թեյթին հաջորդող արքեպիսկոպոսին նամակներ է գրում «Լոնդոն» ասելով, որ եթե ինքը իր կողքին անգլիացի միսիոներներ ունենա, կարճ ժամանակամիջոցում կկարողանա ամբողջ հայ եկեղեցին և թողոքական բոլոր հայ համայնքները դավանափոխ անել և ինքն էլ դառնալ հայ անգլիկանների կաթողիկոսը կամ արքեպիսկոպոսը։ Այս իմաստով նա խնդրում է Քենտրբերիի արքեպիսկոպոսի միջնորդությունը բարձր դասն մտն։ Քենտրբերիի արքեպիսկոպոսի անտարբերության համար նույնիսկ ընդվզում են մի քանի անգլիկան հոգևորականներ, այդ թվում և Թրիսթրամը ինքը, որը շատ խիստ նամակներ է գրում վերջինիս։ Սակայն բոլոր ճիգերը մնում են ապարդյուն։

1887—1890 թվականներին շարունակվում են նույն խնդրանքները Քենտրբերիի արքեպիսկոպոսին Թուրքիո, այսպես կոչված, հայ անգլիկանների կողմից, մինչև այն ժամանակ, երբ 1890 թվականից հետո Թուրքիայում խիստ հալածանքներ են սկսվում

թրիստոնյաների նկատմամբ: Այս դեպքերը բնականաբար վատ են անդադրադադունում մի-սիսներակա գործունեությանը վրա և պատճառ դառնում, որ անգլիկան եկեղեցու կամ անգլիկան հայ համայնքների դեկա-վարներից ոմանք 1884—1895 թվականնե-րի կոտորածների օրերին ապաստան գրտ-նեն Անգլիայում: Կ. Ստեփանյանը նա-հատակվում է, իսկ ուրիշներ լքում են իրենց հոտը, այդ թվում և Մկրտիչ արքեպիսկո-պոսը, որին 1896—1898 թվականներից հանդիպում ենք Լոնդոնում:

Մկրտիչ արքեպիսկոպոսի ջանքերը, նոր կապեր ստեղծելու թեյք արքեպիսկոպոսին հաջորդող Պենտոն արքեպիսկոպոսի հետ՝ ապարդյուն են մնում: Դիտությունը հասնում է այն բանին, որ նա Այնթապ վերադարձի իր ճանապարհածախսը մեծ դժվարությամբ է ձեռք բերում անգլիկան եկեղեցու կողմից և հուսախաբ վերադառնում իր համայնքի մոտ:

Մկրտիչ արքեպիսկոպոսի անձնական դժվարությունները՝ նրա միակ զավակի մահը, այնուհետև նրա կնոջ փախուստը, և անգլիկան եկեղեցուց բացահայտորեն իր լքված լինելը վերջնականապես զգալ են տալիս նրան իր պարտությունը: Ահա այս բոլոր հանգամանքները, ինչպես նաև թուր-քերի կողմից քրիստոնյաների հալածանք-ներն ու հայ անգլիկան համայնքի կրած հուսախաբությունները անգլիկան եկեղեցուց և իշխանություններից, այս շարժումը տա-նում են դեպի անկում:

Մյուս կողմից՝ ամերիկյան Բողոքական տարբեր հարանվանություններ, ինչպես՝ ե-րիցականները, համայնականները և մկրտ-չական-բողոքական ընկերությունները ա-ռավել զորացնում են իրենց միսիոներական առաքելությունը հայերի մեջ այդ շրջանում, ցույց տալով նրանց նյութական և բարոյա-կան ամեն աջակցություն: Հոմմեական կա-թոլիկ եկեղեցին ևս ուժեղացնում է իր քա-րոզչական աշխատանքները և աղայիսով պատճառ դառնում, որ Մկրտիչ արքեպիս-կոպոսի համայնքի ուշադրությունը շեղվի դեպի վերջիններս: Իսկ Մկրտիչ արքեպիս-կոպոսի նյութական վիճակը ոչ միայն չէր բարելավվում, այլ օրըստօրէ՛ վատթարա-նում էր և նրա պարտքերը գնալով ավելա-նում էին:

Ի վերջո վրա են հասնում հիվանդության ծանր օրերը և Մկրտիչ արքեպիսկոպոսը զրկվում է նաև պաշտամունքներ կատարե-լու հնարավորությունից: Նրա փոխարեն անգլիկան հայ համայնքի պաշտամունքնե-րը կատարում է Եղիա Աթոբայան անունով մի սարկավագ, որը նոր հարաբերություն-ների մեջ է մտնում անգլիկան եկեղեցու

դեկավարների հետ: Մկրտիչ արքեպիսկո-պոսը համոզվելով, որ այնև ոչ մի օգնու-թյուն չի կարելի ակնկալել Քենտրբերիի արքեպիսկոպոսից, իր հայացքն ուղղում է դեպի Յորքի արքեպիսկոպոսը, որին ուղ-ղած իր մի նամակում՝ գրված 1901 թ. հու-նիսի 21-ին (դա Մկրտիչ արքեպիսկոպոսի վերջին նամակն է), նա շատ համառոտ կերպով շարադրում է իր համայնքի առա-ջացման պատմությունը: Նամակում նա նշում է, որ արդեն մի տարի է, ինչ ինքը աջ կողմից անդամալուծված է և բացեիքաց խնդրում նյութական օգնություն համայնքի և անձամբ իր համար:

Նամակին պատասխանելուց առաջ Յոր-քի արքեպիսկոպոսը երկար մտաճում և հարց ու փորձ է անում Մկրտիչ արքեպիս-կոպոսի մասին: Մի քանի տարի անց սար-կավագ Աթոբայանը 1904 թ. հունվարի 16-ի գրությամբ Քենտրբերիի արքեպիսկոպոսին հայտնում է Մկրտիչ արքեպիսկոպոսի մա-հը: Նա իր նամակը եզրափակում է հետև-յալ խոսքերով. «Այս նամակով, առանց ա-վելորդ հեռականության, դիմում ենք Ձերդ սրբազնության» խնդրելով հոգևորական ա-պահովել մեզ և մեր համայնքին նյութապես օգնել, որպեսզի մեր եկեղեցին կարողանա շարունակել իր գոյությունը»:

Մի այլ նամակում, գրված 1904 թվի փե-տրվարի 1-ին, նա կրկին շեշտում է իրենց համայնքի կազմալուծված վիճակը և իր գոյությունը վերջացնում այսպես. «Առնչվազն որոշ քայլեր պետք է անել՝ պահպանելու համար անգլիկան եկեղեցու այս ճյուղը և պետք է փրկել նրա գոյությունը իբրև այդ-պիսին»:

Քենտրբերիի արքեպիսկոպոսը փետր-վար 6-ի իր պատասխան նամակում մեկ-րորդմիշտ և հստակ կերպով արտահայտում է իր վերաբերմունքը դեպի հայ անգլիկան համայնքը ասելով, որ հնարավոր չէ իր համար օգնել Մկրտիչ արքեպիսկոպոսի համայնքին: Նա նշում է, որ ինքը մեկից ավելի անգամներ շեշտել է, որ կացություն-ը ամբողջովին փոխված է այն օրերից ի վեր, երբ թեյք արքեպիսկոպոսը օգնում էր և քաջալերում Մկրտիչ արքեպիսկոպոսին՝ առաջ տանելու համար այդ շարժումը: Այն ժամանակ, դա միակ հնարավոր գիծն էր քարեփոխության: Քենտրբերիի արքեպիս-կոպոսը բացահայտորեն հասկացնում է, որ անգլիկան եկեղեցին այժմ աշխատում է իր յավազույն նպաստը բերել ամբողջ հայ ե-կեղեցու ներքին քարեփոխումների շարժ-ման գծով, առավել լավ կրթություն տալու ուղղությամբ թե՛ աշխարհականներից, և թե՛ հոգևորականներից: «Այսպիսով,—ասում է նա,—մեր գործունեության այս նոր գիծը, որ

Եկատի ունի Արևելյան եկեղեցիների կողմից մեզ ուղղված հրավերը՝ օգնելու իրենց բոլորովին տարբեր է նախորդ շրջանից»։ Այլ խոսքով՝ արքեպիսկոպոսը չի քաջալերում հայ եկեղեցու մեջ գոյություն ունեցող բաժանումները։ Վերջում նա առաջարկում է այս հարցով դիմել Երուսաղեմի անգլիկան եպիսկոպոսին։

Հուլիսի 23-ին Այնթապից Լոնդոն ուղարկված մի նամակ հայտնում է, որ անգլիկան հայ համայնքը կազմավորման ընթացքի մեջ է։ Այնուամենայնիվ համայնքի ղեկավարները վճռականորեն են հայտնում շարունակելու իրենց գոյությունը իբրև անկախ եկեղեցի։

Իրենց դրության մասին անգլիկան այնթապցիները գրում են Երուսաղեմի անգլիկան եպիսկոպոսին և ստանում մի պատասխան, որի մեջ առաջարկվում էր, որ համայնքն իրեն դնի ամերիկյան միսիոներների վերահսկողության ներքո։

Հայ անգլիկան փոքրաթիվ համայնքի ղեկավարները իրարահաջորդ նամակներով իրենց վճռականությունն են հայտնում Քենտրբերիի արքեպիսկոպոսին, կապված

մնալու անգլիկան եկեղեցու դավանությամբից։

Այնթապի և Մարաշի հայ անգլիկանների վերջին հուլիսի Գրիգոր Քեշիշյանը, 1905 թվականի հուլիսի 21-ի իր նամակում օգնություն է պահանջում անգլիկան եկեղեցու ղեկավարներից. նամակը մնում է անպատասխան։

1905 թվականին հայ անգլիկանների կիսակառույց եկեղեցին փորձում են գնել ֆրանցիսկյան ուխտին պատկանող կաթոլիկ միսիոներները։ Նրանք թղթակցություններ են սկսում Քենտրբերիի արքեպիսկոպոսի, Անգլիո ֆրանսիական դեսպանի և Հայեպի անգլիական հյուպատոսի հետ։ Խնդիրը հասնում է մինչև Ջիբրալթարի Անգլիայի եպիսկոպոսին, որը պնդում է, թե եկեղեցու մասին որևէ որոշում հնարավոր չէ առնել առանց Անգլիո մեջ գոյություն ունեցող այդ եկեղեցու հիմնադրամի, որի ղեկավարն էր Թրիսթամը։

Բացի Ջիբրալթարի եպիսկոպոսի այս նամակից, որն ուղղված է Քենտրբերիի արքեպիսկոպոսին, ուրիշ որևէ փաստաթուղթ չկա հայ անգլիկան եկեղեցու ապագա վիճակի մասին։





Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ԿՈՄՍ Ա. Ս. ՌԻՎԱՐՈՎԻ «ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ» ՀՈՂՎԱԾՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԸ

Կոմս Ա. Ս. Ուվարովը իր «Экспедиционная библиотека» («Էքսփիանցի մատենադարանը»)՝ հայտնի հողվածում, 1—34 հերթական թվահամարների մեջ, արձանագրել է մանրանկարչական որոշակի արժեք ունեցող 33 ամբողջական ձեռագրեր (№№ 1—17, 18—34) և ձեռագրական երկու թերթանոց 1 պատառիկ (№ 18), ընդամենը 34 միավոր, այդ թվում.

«Աստուածաբանութիւն Դիոնիսիոսի Արիսպագացոյ»—1 (№ 30).

«Աստուածաշունչ»—17 (№№ 7, 10, 12, 14, 16, 17, 19, 21, 22, 26—29, 31—34).

«Աւետարան»—14 (№№ 1—3, 5, 6, 8, 9, 11, 13, 15, 18, 20, 24, 25).

«Մատենոցի Յովհաննու Ոսկերեանի»—1 (№ 4).

«Մանրումունք»—1 (№ 23):

Արձանագրված 33 ամբողջական ձեռագրերից 27-ը (№№ 1, 2, 4—14, 16, 17, 19—24, 27, 29, 31—34) Էքսփիանցի նախկին գրատան հիմնական հավաքածուի ձեռագրերից են՝ մկարագրված «Կարինյանց» կոչվող ցուցակով¹: Դրանք ուսումնասիրության մեջ մշված են Էքսփիանցի գրատան «հին» թվահամարներով:

Մնացած 6 ձեռագրերից 5-ը (№№ 3, 15, 25, 28, 30) նույն գրատան «Գևորգյան» կոչվող հավաքածուից են և, առանց հասցեի հիշատակման, մշված են այդ հավաքածուի թվահամարներով, իսկ 1-ը (№ 28), որի մոտ որևէ հավաքածուի թվահամար չի մշված, Ուվարովը տեսել է Գեորգ Դ-ի մոտ: Այն Գեորգ Դ-ի անձնական հավաքածուի ձեռագրերից է (№ 43)² և հետագայում (1892) նույնպես մտել է «Գևորգյան» հավաքածուի մեջ (№ 359)³: Ի միջի ալլոց Ուվարովը թյուրիմացաբար հիշյալ ձեռագիրը համարել է Ժե դարի գործ՝ գրված 1409—1411 թվականների ընթացքում, մինչդեռ, իրականում այն ընդօրինակված և ծաղկված է 1938 թվականին Սարգիս Պիծակի ձեռքով՝ Հակոբ Բ Տարսոնացի կաթողիկոսի համար (1927—1941):

Ինչ վերաբերում է № 18-ի տակ արձանագրված երկու թերթանոց պատառիկին, որի մի թերթի վրա եղել է Լևոն Գ-ի դիմանկարը, իսկ մյուսի վրա՝ Կոստանդին կաթողիկոսի ընծայականը, ապա այն, ըստ Գ. Հովսեփյանի, եղել է ոչ թե քնագիր, այլ

¹ «Ճուշտ Գեորգ Դ կաթողիկոսի ձեռագրերի» (Մատենադարան, ձեռ. № 8794, թերթ 79ա—79բ):

² Զեռագիրը 1886-ից եղել է Վանի առաջնորդարանում՝ Կղմես վրդ. Չոխաճյանի մոտ («Նստարք», էջ 78—80): Այն 1879-ից Կ. Պոլսում 3000 դահիկանով գնել է տիկ. Խլզիհեն և մվիրել իր եղբորը՝ Գեորգ Դ-ին:

³ «Пятый археологический съезд в Тифлисе», Москва, 1882, стр. 350—377.

⁴ «Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի սրբոյ Աթոռոյն Էքսփիանցի...», Տփլիս, 1883:

Նոր Նախիջևանի ս. Լուսավորիչ եկեղեցու № 28 ձեռագիր Ալվետարանից մկարիչ Արծաթաբայանի ձեռքով կատարված մի պարզ ընդօրինակություն⁵։ Դրա բնագիրը 1922 թվականին մուտք է գործել Երևանի Գրականության թանգարանի հավաքածուն (№ 228), իսկ այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (№ 8921)⁶։

Բացի վերոհիշյալ 34 ձեռագրերից, որոնք բոլորն էլ անխտիր գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (տես կից տախտակը), Ուվարովը զանազան առիթներով հիշատակում է մահ 38 այլ ձեռագրեր, այդ թվում.

ա. Էջմիածնի գրատնից 35 ձեռագիր, որոնք թեև կան Բրոսսեի ցուցակում, սակայն ինքն առիթ չի ունեցել տեսնելու։ Դրանց մեծք անդրադարձել ենք Բրոսսեի ցուցակի մասին մեր հոդվածում (տես «Էջմիածին», 1970, № ԺԲ, էջ 50—52)։

բ. Լուգարյան ճեմարանի հավաքածուից 2 Շարակնոց, մեկը՝ 1508 թվականից (էջ 370), իսկ մյուսը՝ ԺԷ դարից (էջ 373)։ Դրանցից առաջինը Մաշտոցի անվան Մատենադարանի № 7058 ձեռագիրն է, իսկ մյուսը՝ № 7075։

գ. Աշտարակի ս. Մարիանե եկեղեցուց 1878 (մշված՝ 1880) թվականին Որոտանի (մշված՝ Borotani) Աղուերձ (մշված՝ Xeyertan, որ «Յողուերձ» ձևի աղավաղումն է) գյուղում ընդօրինակված մեկ Ալվետարան (էջ 374)։ Ձեռագիրս Մատենադարանը ձեռք է բերել 1848 թվականին՝ Երևանաբնակ Հակոբ Հակոբյանից (№ 8910)։

Նշենք, որ Ուվարովի հոդվածում հիշատակված ձեռագրերի մատենագիտական տվյալներում կան քազմաթիվ աղավաղումներ ու վրիպակներ։ Դրանցից ծանոթագրում ենք միայն այնպիսիները, որոնք կարող էին ապակողմնորոշել ձեռագիրը փնտրողին։

ՀԱՄԵՆԱՏԱԿԱՆ ՏԱՆՏԱԿ Ա. Ս. ՈՒՎԱՐՈՎԻ «ԷԶՄԻԱԾԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ» ՀՈԳՎԱԾՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՎԱՍԹ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

Թվական	Մատենադարան			Ուվարով	Մատենադարան			Ուվարով	Մատենադարան			Ուվարով	Մատենադարան		
	Էջմիածին	Գևորգյան	Արդի		Էջմիածին	Գևորգյան	Արդի		Էջմիածին	Գևորգյան	Արդի		Էջմիածին	Գևորգյան	Արդի
1	229	—	2374	10	154	—	178	19	159	—	182	27	179	—	351
2	236	—	283	11	255	—	231	20 ¹⁵	230	—	1519	28	—	17	2669
3	—	23 ⁶	3723	12	155	—	345	21	181	—	353	29	166	—	188
4 ⁹	906	—	988	13	234	—	197	22	182	—	206	30	—	71 ¹⁰	2503
5	369	—	311	14	156	—	179	23	559	—	591	31	173 ²⁰	—	202
6	257	—	288	15 ¹²	—	22	2848	24	350	—	225	32	175	—	349
7 ²⁰	153	—	177	16	157	—	180	25 ¹⁸	—	24 ¹¹	2670	33 ²¹	170	—	200
8	364	—	987	17 ¹³	158	—	181	26	—	359 ¹⁸	2627	34	176	—	350
9 ¹¹	260	—	275	18 ¹⁴	—	—	8321								

⁵ Ըստ երևույթից մկարիչ Արծաթաբայանի ձեռքով ընդօրինակված լինելու հարցը կարիք ունի վերահայրան։ Ուվարովը Լևոն Գ-ի դիմակարը Գեորգ Դ-ի մոտ տեսել է այն ժամանակ, երբ մկարիչ Հ. Ա. Արծաթաբայանը (1878—1916) հազիվ չորս տարեկան թողովակոս մանկիկ էր...

⁶ Գեորգեան Ա., Լևոն Երրորդ թագավորի Ալվետարանը («Բանբեր Մատենադարանի», № 8, Երևան, 1967, էջ 143—149)։

⁷ Նշված է՝ 1095 թ., պետք է լինի՝ 1099 թ.։

⁸ Նշված է՝ № 21։

⁹ Նշված է՝ 1045 թ., պետք է լինի՝ 1048 թ.։

¹⁰ Նշված է՝ 1151 թ., պետք է լինի՝ ԺԳ դ.։

¹¹ Նշված է կազմելու թվականը՝ 1220։ Ձեռագիրս ընդօրինակված է 1071—1079 թթ. ընթացքում։

¹² Ձեռագիրս Նոր Նախիջևանի ս. Լուսավորիչ եկեղեցու հավաքածուից է և Էջմիածին է մուտք գործել 1878 թվականին Սարգիս արքեպ. Ջաղայանի հավաքածուի կազմում։

¹³ Նշված է՝ 1287 թ., պետք է լինի՝ 1295 թ.։

¹⁴ Հերթական թվահամարը քաց է թողնված։

¹⁵ Նշված է հետագա ստացողի թվականը՝ 1808։

Ձեռագիրս ընդօրինակված է 1282-ին։

¹⁶ Նշված է՝ № 28։

¹⁷ Նշված է՝ № 224։

¹⁸ 2ի մշված։

¹⁹ Նշված է՝ № 10։

²⁰ Նշված է՝ № 175։

²¹ Նշված է՝ 1688 թ., պետք է լինի՝ 1658 թ.։

ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՀԱՅՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱԶԱԾՈՒՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի բազմահազարանոց ձեռագրական հավաքածուի բաղկացուցիչ մասերից մեկն է նաև Գարեգին եպս. Հովսեփյանի (հետագայում՝ կաթողիկոս Տաճն Կիլիկիո) հայերեն ձեռագրերի հավաքածուն, որն իր ներկա դրությամբ ամփոփում է Ժ—ԺԹ դարերում ընդօրինակված 20 «Աւետարան» (№№ 1—3, 7, 19—30, 33—36), 2 «Գանձարան» (№ 10, 46), 1 «Գառազանագիրք» (№ 50), 1 «Գիրք ճակատամարտութեան» (№ 37), 1 «Ընդդէմ երկարեակաց» (№ 41), 1 «Խորհրդատետր» (№ 38), 2 «Կանոնագիրք» (№№ 15, 47), 1 «Հաւախօս» (№ 40), 1 «Մաշտոց» (№ 18), 2 «Մատրոնտիր» (№№ 32, 39), 1 «Մաշտոց» (№ 14), 3 «Մեկնութիւն» (№№ 4, 6, 12), 3 «Յայտնաւորք» (№№ 11, 18, 31), 2 «Շարակնոց» (№№ 42, 43), 2 «Պատմագիրք» (№№ 5, 45), 1 «Տաղարան» (№ 16), 3 «Քարոզգիրք» (№№ 8, 44, 48), քերականական, իմաստասիրական ու դավանաբանական նյութերի 2 «Ժողովածու» (№№ 9, 17) և 2 թերթանոց մագաղաթյա 1 պատանոկ (№ 49):

Նշված ձեռագրերից 49-ը (№№ 1—49) Մատենադարան են մուտք գործել քսանական թվականների վերջերից ըստ ցուցակի՝ «Ցուցակ Գարեգին Եպիսկոպոսից ստացված ձեռագրերի» (Մատենադարանի անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, № 28ր), իսկ 1-ը (պայմանականորեն № 50)՝ ցուցակից դուրս:

Մատենադարան մուտք գործելուց հետո, նշված 50 միավորներից 41-ը (№№ 5, 6, 8—44, 46, 48) մտել են ժամանակի «Նոր շարք» կոչվող հավաքածուն, 7-ը (№№ 1—4, 7, 47, 50) ստացել են ընդհանուր ֆոնդի հերթական թվահամարներ, 1-ը (№ 45. «Պատմութիւն Արեւայ արքեպիսկոպոսի») միացվել է 1938 թվականին Մատենադարան մուտք գործած «Ճանապարհորդութիւն Վարդանայ Օձնեցույ» աշխատության հետևելու համար միասին դրվել մեկ կազմի մեջ (№ 8822), իսկ 1-ը (№ 49) մուծվել է պատմիկների ֆոնդ: Վերջինիս արդի թվահամարը, մատենագիտական տվյալների բացակայության պատճառով, առայժմ մնում է անորոշ: Նշենք նաև, որ № 9 ձեռագիրը («Ժողովածու», նյութ՝ թուրք, մեծություն՝ 22×16,5, գիր՝ բոլորգիր, գրիչ՝ Եփրեմ, ստացող՝ Յովհաննէս Որոտնեցի») մենք մինչև վերջերս համարել ենք կորած (տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հատոր Ա, Երևան, 1965, էջ

125): Կարծում ենք, որ այն Մատենադարանի № 7151 ձեռագիրն է, այն տարբերությամբ, որ սխալ են նշանակված գրչի անունն ու ձեռագրի չափերը. Եփրեմը ոչ թե տվյալ ձեռագրի գրիչն է, այլ՝ նախագաղափար օրինակի, իսկ ձեռագրի բուն չափերի փոխարեն թյուրիմացաբար կրկնված է նախորդ № 8 ձեռագրի չափերը:

Կից տալիս ենք նշված 50 ձեռագրերի հին և նոր թվահամարների համեմատական տախտակը:

Թե ո՛ւմ կամ ի՛նչ հաստատության են պատկանել նշված ձեռագրերը նախքան Գարեգին Հովսեփյանի հավաքածուի մեջ մտնելը, գրեթե ոչինչ հայտնի չէ, որովհետև Հովսեփյանը ձեռագրերից և ոչ մեկի մեջ համապատասխան նշում չի թողել: Հայտնի է, սակայն, որ նշված ձեռագրերից շատերը Գարեգին Հովսեփյանը ձեռք է բերել Հայաստանի տարբեր շրջանների և հատկապես պատմական Արցախի վանքերից ու եկեղեցիներից՝ իր ճանապարհորդությունների ժամանակ:

Ստորև բերվող անվանացանկը կազմված է պահպանված հիշատակագրությունների և գրականության մեջ եղած տվյալների հիման վրա.

Արել արքեպ., 1882 թ.—1 (№ 8822):

Ալեքսան մահուսի Ղուբրիկյան, 1809 թ.—1 (№ 6220):

Աղեքսանդր Մխիթարյան, Աղեքսանդրապոլ, 1897 թ.—1 (№ 6483):

Աղապարզ գյուղի եկեղեցի, 1696 թ.—1 (№ 6750):

Ավետիք Կարմիր Մատուրենց Ջուղայեցի, 1677 թ.—1 (№ 6560): Գնել և նվիրաբերել է Տիֆլիսի Բեթղեմի մ. Աստվածածին եկեղեցուն:

Բանանց—տե՛ս Մեն Բանանց:

Գետաշեն գյուղ, Ավագ սուրբ Նշան մատուռ—3 (№№ 6288, 6746, 6903): Տե՛ս Մալար եպս. Բարխուդարյանց, «Արցախ», էջ 258—264, №№ Բ, Գ, Դ: Տե՛ս նաև մեր «Գետաշենի Ավագ սուրբ Նշան մատուռ հայերեն ձեռագրերը» («Էջմիածին», 1971, № Թ, էջ 54—55):

Գառավո եկեղեցի, 1651 թ.—1 (№ 6340): Եկեղեցուն է վախճարված 1651-ին:

Նաչի քհ. Առաքել Տեր-Օհանյանց, 1605 թ.—1 (№ 6367): Գնել և նվիրաբերել է Բանանցի մ. Աստվածածին եկեղեցուն:

Նփրեմ կթղ., 1821 թ.—1 (№ 6904): Նվիրաբերել է Կարապետ Մարկոսյան Թաուտմովին:

Լիմ անապատ, 1778 թ.—1 (№ 6755): Անապատին է նվիրաբերել Տփլիսիցի Շերմազանի որդի Նազարը:

Կարապետ Մարկոսյան Թառոմով, 1821 թ.—1 (№ 6304): Ստացել է Եվրեմ կթղ.—ից: Կուսանաց անապատ—տե՛ս Ղարամուրատ:

Ղազար, Տեր, Տեր-Եղիսդարյան, Նախիջևան, 1796 թ.—1 (№ 6329):

Ղարամուրատ անապատ (Կուսանաց անապատ)—1 (№ 6759):

Ղրիմ, ս. Ստեփանոս Նախավկայի եկեղեցի, 1717 թ.—1 (№ 6736):

Մակար ճախասարկավազ, ԺԸ դ.—1 (№ 6419): Ստացել է Սուքիաս արքեպ.—ից:

Մարտիրոս տիրացու, ԺԸ դ.—1 (№ 7151):

Մեծ Բանանց, ս. Լուսավորիչ եկեղեցի—10 (№№ 6303, 6399, 6367, 6424, 6427, 6432, 6560, 6667, 6683, 6759): Տե՛ս «Արցախ», էջ 278—284, №№ Բ—Է, Թ, ԺԱ—ԺԳ: Տե՛ս նաև մեր «Մեծ Բանանց գյուղի ս. Լուսավորիչ եկեղեցու հայերեն ձեռագրերի հավաքածուն» («Էջմիածին», 1970, № ԺԲ, էջ 52—53):

Մեծշեն, ս. Գեորգ եկեղեցի—1 (№ 6202): Ս. Ջալալյանցն այն տեսել է Նորաշեն գյուղում («Ընամապարհորդություն ի Մեծն Հայաստան», հատոր Ա, էջ 180), իսկ Մ. Բարխուդարյանցը՝ Մեծշենում («Արցախ», էջ 219—220):

Մկրտիչ Մախասյան—1 (№ 6340):

Յարամիշ և աղք. Լև գյուղ, 1877 թ.—1 (№ 6746):

Նազար, որդի Շերմազան Տփլիսեցու, 1778 թ.—1 (№ 6755): Գնել և նվիրաբերել է Լիմ անապատին:

Չիմինազ գյուղ, Դիզակ, 1698 թ.—1 (№ 6427):

Պալլունա գյուղ, 1717 թ.—1 (№ 6492):

Սարգիս Գեռաշենցի, Գեռաշեն, 1800 թ.—1 (№ 6560): Գնել և նվիրաբերել է Բա-

նանցի ս. Լուսավորիչ եկեղեցուն:

Սուքիաս արքեպ., ԺԸ դ.—1 (№ 6419): Նվիրել է Մակար ճախասարկավազին:

Վան, ս. Վարդան եկեղեցի—1 (№ 7060):

Վերին Աղսուց եկեղեցի—1 (№ 6281):

Տփլիս, Բեթլեհեմի ս. Աստվածածին եկեղեցի, 1877 թ.—1 (№ 6560): Եկեղեցուն է նվիրաբերել Ավետիք Կարմիր Ծառուրենց Ջուղայեցին:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱՌՏԱԿ
ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՋԵՌԱԳՐԵՐԻ
ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

Գ. Հովսեփյան	Մատենադարան		Գ. Հովսեփյան	Մատենադարան	
	Շերմազան	Աղբյուր		Շերմազան	Աղբյուր
1	—	6202	26	20	6303
2	—	6288	27	105	6705
3	—	6289	28	104	6667
4	—	6419	29	108	6759
5	92	6483	30	106	6560
6	52	6433	31	40	6338
7	—	6291	32	42	6340
8	55	6449	33	111	6755
9	152	7151	34	72	6683
10	101	6489	35	110	6875
11	14	6279	36	35	6370
12	25	6301	37	53	6439
13	15	6280	38	119	6750
14	166	7005	39	83	6736
15	167	7060	40	58	6329
16	184	7159	41	156	6963
17	134	6886	42	174	7138
18	8	6220	43	159	7068
19	54	6432	44	96	6486
20	47	6424	45	—	8822
21	36	6367	46	140	6968
22	61	6427	47	—	7066
23	62	6669	48	97	6487
24	41	6339	49	—	—
25	109	6746	50	—	7340





ՄԻ ՎԱՎԵՐԱԳԻՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՀ Միմիստրների սովետից ստորագրեց Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) «Ջանազան հեղինակների արխիվ» կոչված արխիվային ֆոնդում հանդիպեցինք Ալեքսանդրապոլ (այժմ Լեհինական, հնում Գյումրի-Գյումրի) քաղաքի հայկական եկեղեցիների վերաբերյալ գրված անհեղինակ ձեռագիր մի գրվածքի և ձեռագրի միջոցով պարզեցինք, որ դա Լեւոնիանի միաբանության ամրագր, Շիրակի թեմի վոխանորդ, հետագայում թեմակալ, Արտակ եպիսկոպոս Սմբատյանի (1870—1897 թթ. ?) գրվածքն է, որը վերաբերում է Ալեքսանդրապոլ քաղաքի չորս եկեղեցիների հիմնադրման և դրանց կառուցման ու ավարտման պատմությանը:

Հայտնի է, որ 1828—1828 թվականների ուսու-թուրքական պատերազմից հետո, 1828 թվականի սեպտեմբերի 2-ին կնքած Ադրիանապոլի հաշտության պայմանագրի համաձայն, ռուսները իրենց գրաված Կարսի, Արլահանի, Էրզրումի և հայազետի մարզերը վերադարձրին թուրքերին և հիշյալ մարզերի հայ բնակչության ցանկությամբ և ռուս կառավարության համաձայնությամբ գաղթականություն կազմակերպվեց Ախալցխա, Ախալքալաք և Գյումրի գյուղաքաղաքներում, նրանց շրջակա գյուղերում և այլ վայրերում: Գյումրիում բնակություն հաստատած հայ գաղթականները այդտեղ կառուցում են սուրբ Աստվածածին աճյունով փայտածածկ եկեղեցի, որը 1881 թվականին փլվում է, որի տեղը հետագայում, երեք տարվա ընթացքում, հայ ճշմարիտ վարպետների ձեռքով, 1880 թվականին, կառուցում են քարաշեն ներկայիս հույակապ եկե-

ղեցին և նրա մեջն են դնում «Եօթվիրաց» ս. Աստվածածնի պատկերը, որը Հասան-դալայի ս. Աստվածածին հույակապոր վանքի սեփականությունն է եղել և տեղի հայ բնակչության գաղթելու ժամանակ այդ պատկերը հիշյալ վանքի վանահայր Պողոս վարդապետ Զանյաթյանը իր հետ տանում և 1892 թվականին Ղանիջայի Մարմաշեն վանքում է դնում, որն, ըստ ավանդության, Ղուկաս ավետարանիչի (մ. թ. 1-ին դար) նկարածն է: Այդ նկարը հետո տեղափոխում են Հառիճի վանք: Ներսես Աշտարակեցի (1770—1857 թթ.) կաթողիկոսի պահանջով այդ նկարը 1851 թ. տարվում է Լեւոնիան, իսկ 1852 թվականին Ալեքսանդրապոլի բնակիչների պահանջով տեղափոխվում է Ալեքսանդրապոլ և դրվում ս. Աստվածածին (Յոթվերք) եկեղեցում, ուր պահվում է մինչև այսօր: Ս. Աստվածածին եկեղեցում դրված «Եօթվիրաց» պատկերից ստացված եկամուտի մեկ երրորդը հատկացվել է Հառիճի վանական դպրոցի պահպանությանը մինչև 1818 թվականը, թուրքերի արշավանքը: Արտակ եպիսկոպոս Սմբատյանը հիշյալ գրվածքում «Եօթվիրաց» պատկերի անվան առաջանալու պատմությունը քաջատրելու համար, չորս ավետարանիչներից յոթ թնաթան է մեջ բերել՝ Աստվածածնի սրտում յոթ սուր ցցվելու, յոթ վերք ստանալու մասին:

Արտակ եպիսկոպոս Սմբատյանը գրվածքում զգալի տեղ է հատկացրել Ալեքսանդրապոլի (Լեհինական) ս. Փրկիչ եկեղեցու կառուցման պատմությանը: Այդ եկեղեցին հիմնադրվել է 1859 թվականին և կառուցվել միջնադարյան հայ ճարտարապետության զարդերից մեկի՝ Անիի Մայր եկե-

դեցու (կաթողիկէ, 10-րդ դար) անան-
թամբ ու ավարտվել 1876 թվականին: Ե-
կեղեցին կառուցվել է առանց հարտարապե-
տի և առանց հատակաձի: Եկեղեցին կա-
ռուցող վարպետները՝ Ծաբոշնիկով ուստա
Պապոն, Անտիկեց Թադևոսը, Գեղամ
(Հովհաննես) և Կանցոնց Խաչոն, նաև ու-
րիշները հաճախ Ալեքսանդրապոլից կառ-
քերով մեկնել են Անի, ճայել Անիի Մայր Ե-
կեղեցու կառուցվածքին, վերադարձել և շա-

րունակել ու Փրկիչ եկեղեցու կառուցումն ու
այդպես ավարտել այն:

Արտակ եպիսկոպոս Սմբատյանի գրված-
քում խոսք կա նաև 1858 թվականին հիմնա-
դրված և 1870 թվականին ավարտված ս.
Նշան եկեղեցու կառուցման և ավարտման
թվականները չնշված ս. Լուսավորիչ եկեղե-
ցու մասին:

ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԱՐԱՄՅԱՆ

ԱՂԵՋՍԱՆԴՐԱՊՈԼԻ Ա. ԱՍՏՎԱԾԱՄԻՆ ԵԿԵՂԵՑԻ

1829—30 թվականին Բասենցի և Կարսից
գաղթում են 14.000 ընտանիք (80.000
շունչ) Չախալյան (Խաժակյան) Ստեփան
արքեպիսկոպոսի առաջնորդությամբ*, և
Գյումրիի մոտ հիմնում են Աղեքսանդրապոլ
քաղաքը Աղեքսանդրա թագուհու անվամբ**:
Նոր գաղթած ժողովուրդը հիմնում է նաև
ս. Աստվածածին եկեղեցին հասարակ շեն-
քով և փայտածածկ:

Գյումրի գյուղն էլ ուներ յուր եկեղեցին ու
Աստվածածին անունով եկեղեցին, որը ետո
1882 թվին վերանորոգվելով վերակոչվել
է ս. Լուսավորիչ:

Քաղաքի ս. Աստվածածին եկեղեցին
1881 թվին փլվում է ծածկը, տեղ Մարտիրոս
քահանա Տեր Պողոսյանի ջանքերով ու աշ-
խատությամբ և աշխատակից հոգաբարձու-
թյամբ Գևորգ Խոյեցյանի, ուստա Մանուկի
(դուրգար), ուստա Աղաբաթի (դուրգար)
երեք տարում շինել են և 1890 թվականին
օծել տվել Սուքիաս եպիսկոպոս Պարզյանի
ձեռքով:

* Անհրաժեշտ ենք համարում տալ հետևյալ պար-
զարանումը: 1828—1830 թվականներին Էրզրումից
գաղթել են 7288, Կարսից 2467, Բալազանից 4215 և
Արդահանից 87 ընտանիք, 80 կամ 100 հազար անձ-
նավորություններ և քնակություն են հաստատել գյու-
լապոլիսյան Ախալցխա, Ախալքալաք, Գյումրի
(Ալեքսանդրապոլ) քնակավայրերում և նրանց շըր-
ջանների գյուղերում: Գաղթականների հոգևոր ա-
ռաջնորդներն էղել են Էրզրումի հայոց հոգևոր ա-
ռաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը և Կարսի հա-
յոց հոգևոր առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսը:

** Կարևոր ենք համարում հիշել, որ Գյումրի
(Կումայրի) քաղաքի նոր անվանակոչման մասին կա
նաև հետևյալ բացատրությունը. ուսական Նիկո-
լայ 1-ին կայսրը 1837 թվականի հոկտեմբերի 4-ին
գալիս է Գյումրի, ուր մույն օրը հիմնադրվում է սուրբ
Ալեքսանդր անունով ուսական եկեղեցին: Կայսրը
մրավարում է Գյումրի քաղաքը վերանվանել Ալեք-
սանդրապոլ:

1824 թվականին քաղաքը վերանվանվում է Լեհի-
նական:

Ծիճող վարպետները եղել են Թուրանենց
Մկրտիչը, Մուրադենց Խաչատուրը և Գեղ-
լույենց Հովհաննեսը:

Ս. Աստվածածին եկեղեցում է դրված
«Եօթվիրաց» ս. Աստվածածնին պատկերը,
որը Հասանդալայի ս. Աստվածածին հուշա-
կավոր վանքի վանահայր և Բասենցի ա-
ռաջնորդ Պողոս վարդ. Ջանլարյանը յուր
հետ բերել էր և 1832 թվին Ղանլիջի Մար-
մաշեն վանքում դրել այդ պատկերը, որ ըստ
ավանդության Ղուկաս ավետարանչի նկա-
րածն է:

Հատիճայի վանքի վանահայր Ստեփան
արքեպիսկոպոսը հաջողացնում է «Եօթվի-
րաց» պատկերը տեղափոխել Ղվիչսոլ Հատի-
ճայի վանք:

1851 թվին Ներսես Ե կաթողիկոսը հի-
